

17.517

Ի. ԿՌԻՎԱԵԼԵՎ

ՀԱԿԱՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՎԵՏԱՐԱՆԻ  
ՔՈՂԻ ՏԱԿ

---

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՅԵՐԵՎԱՆ 1931

24.05.2013

14574

26 SEP 2006

15 JAN 2010

323.2:2

Բ. ԿՈՒՎԵՆԵՎ

4-90

Այր

1788

ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՎԵՏԱՐԱՆԻ ՔՈՂԻ ՏԱԿ



1981

ՅԵՐԵՎԱՆ

75-05511



ՊԵՏՏՐՍԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿ. 1725  
ԳԼԱՎԼԻՏ 6568(Բ)  
ՊՍՏՎԵՐ 3638  
ՏԻՐԱԺ 5000

## ԿՐՈՆԸ ՊԵՏՔ Ե ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ

Յեկեղեցականներէ ու աղանդավորների մեջից հաճախ լսվում են ձայներ, թե՛

«Քրիստոնեական ուսմունքն ու կոմունիզմը—միևնույն բանն են: Քրիստոնեությունն ու կոմունիզմը ձգտում են նույն նպատակին—արդարացի հասարակական կազմի: Քրիստոս առաջին կոմունիստն էր: Քրիստոնեությունն աղքատների ու ճնշվածների կրոնն է»:

Ծուղակի մեջ ընկած հոգևոր թույն ծախող չարչիները փորձում են դուրս դաշ նրանից կոմունիզմի դիմակ հագնելով և իրենց ուսմունքը կարծիք գույնով ներկելով: Նման հայտարարությունների անհեթեթությունն ակներև է, սակայն, վորովհետև աշխատավորների մեջ գեռ կան մարդիկ, վոր միամտաբար ընկնում են խորամանկորեն նեաված այդ ուռկանը, պետք է քննել ու պարզել, թե՛ հիրավի կա՞ արդյոք ճշմարտության դեթ մի փոքրիկ մասնիկ յեկեղեցականների այս պնդումների մեջ:

Քրիստոնեությունն, ինչպես և ամեն մի կրոն (մահձմեղականությունը, հրեականությունը, բուդդայականությունը) սովորեցնում է թե՛ աշխարհում ամեն ինչ ստեղծված է աստծու ձեռքով ու նրա ձեռքով էլ կառավարվում է, վոր աշխարհում վոչինչ չի կարող տեղի ունենալ առանց նրա դիտությունն ու հակառակ նրա կամքի ու ամեն ինչ, վոր կատարվում է յերկրի վրա, կատարվում է այդպես, վորովհետև այդպես է



կամենում աստված: Ինչպես ամեն մի կրոն, այնպես էլ քրիստոնեությունն արդարացնում է ամեն մի խայտառակությունն ու անարդարությունն, վոր կատարվում է յերկրի վրա, ըստ վորում, իբր թե այդ ամենն ստեղծված են ասածուց: Քրիստոնեությունը կոչ է անում չ'ողալ կյանքի բարելավման մասին այս յերկրում, այլ մտածել միայն այն աշխարհի, անդրգերեզմանային կյանքի մասին: Նա կոչ է անում ստրկական հնադանդություն, խոնարհվելու ուժեղների ու հարուստների առաջ և այդպիսով արգելել է հանդիսանում աշխատավորներին բարելավելու, կատարելագործելու իրենց կյանքն այս յերկրի վրա, դրավելով նրանց յերկնքի, ասպագա դրախտային կյանքի ցնորքներով:

### ՔՐԻՍՏՈՆԵՍԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆ ԶԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՈՒ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յեթե այս խնդրի առթիվ խոսք բանաք վորեւէ յեկեղեցականի հետ, նա կ'իտրծի ձեզ համոզել, թե քրիստոնեությունն աղքատների կրոն է, քրիստոնեական ուսմունքն իբր իրեն նպատակ է դրել աղքատներին մըխիթարել, բարելավել նրանց դրությունը: Յեվ իբր ասպացույց դրան՝ յեկեղեցականը կամ աղանդավորը ձեր առաջ կ'թափի մի բեռ վկայությունների ավետարանի բնագրից: Նա առաջ կ'բերի հավանորեն հետևյալ կտորը՝ «Հարուստին նույնքան դժվար է մանկ յերկնքի արթայությունը, վորքան ուղտին ստեղի ծակը»:—«Մ'յ, տեսնո՞ւմ ես, կասի, յերկնքի աղքատությունն ասպահովված է աղքատի համար, մինչդեռ հարուստը մուտք չունի այնտեղ: Ահա թե ի՞նչպես քրիստոնեական աստվածը հոգ է տանում աղքատների մասին»:

Թերևս նա կ'սլատմի ձեզ և աղքատ Ղազարոսի ու

հարուստի առաջը: Այս աշխարհում իբր Ղազարոսն հիվանդ ու կեղտոտ, մուրացիկ ցնցոտիներով ծածկված, ընկած եր հարուստի դռանը, վոր վայելքներով լի կյանք եր վարում: Բայց դրա փոխարեն, յերբ հարուստը մեռավ—ընկավ դժոխք, ուր ամեն կողմից այրվում եր, տապակվում դեհենի կարմիր բոցերի մեջ, հայացքն ուղղեց յերկինք ու այն տեղ տեսավ աղքատ Ղազարոսին սրբերի ու հրեշտակների պատվավոր խումբի մեջ փառավոր բազմած: Աղերսեց հարուստն աղքատ Ղազարոսին «Իեթ մի կաթ ջուր կաթեցրու պապական լեզվիս, ու պատասխան ստացավ՝ «Ղազարոսը շա՛տ է տանջվել յերկրի վրա, դբա համար ել այժմ ասլրում է հաճույքների մեջ, իսկ դու, վոր յերկրում լավ եյիր ասլրում, այժմ պետք է տանջվես, քեզ ջուր չկա»: Տեսնո՞ւմ եք, վորքա՛ն լավ է աղքատների համար դրախտում ու ինչքան դժբախտ են հարուստները:

Յեկեղեցականը դեռ մի քանի տեղ ել կարող է դանել ավետարանի մեջ կտորներ, վորոնք առաջին հայացքից իբր հաստատում են քրիստոնեությունն «աղքատասիրությունը», այսպես՝ «Յերանի նրանց, վոր ծաբավի յեն ու քաղցած», «Յեկեք ինձ մոտ բոլոր տանջվածներդ ու ծանրարեոնվածներդ»: Յեկեղեցականը թերևս մի 5—10 վկայություն էլ բերի դանազան «սուբբ» գրքերից—և այդ բոլորը նրա համար, վորպեսզի բանվորի դասակարգային ատելությունը դեպ իրեն չահագործողն ու հարուստը լուծի ավետարանական քաղցր ջրի մեջ:



ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Ե  
ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

Բայց մի՞թե իսկապես քրիստոնեյությունն այդպիսի  
սե առելությամբ և վերաբերվում հարուստներին ու հա-  
րրատությանը: Ամենից լավ կարելի յե պարզել այդ  
խնդիրն ուսումնասիրելով քրիստոնեյության վո՛չ թե  
խոսքերն, այլ գործերը— Սակայն այդ կանենք մենք ա-  
ռաջլիկալու՞մ, իսկ այժմ մի փոքր կանոց առնենք քրիս-  
տոնեական ուսմունքի վրա:

Ամենից առաջ վերցնենք «սուրբ» գրքի բնագիրն ու  
տեսնենք, թե ի՞նչպես և դրված այնտեղ քրիստոնեական  
«սիրտ» խնդիրը՝ դեպի աղքատները և «ատելության»  
խնդիրը՝ դեպի հարուստները:

Ինչպես «հին», այնպես էլ «նոր» Կտակարանի մեջ  
կան շատ այնպիսի տեղեր, վոր հիմնովին հերքում են  
քրիստոնեյության դեպի աղքատները տածած սիրտ ու  
դեպի հարուստներն ու հարստությունն ունեցած ատե-  
ության մասին հորինված բոլոր հեքիաթները:

«Աստված մարդուն տվել է՝ հարստություն և կա-  
րողություն... դա աստվածային պարզե և»<sup>\*</sup>): Ուրեմն  
յեթե հարստությունն աստվածային պարզե և, ինքնին  
հասկանալի յե, վոր նա չի կարող արդեւք հանդիսանալ  
իբ տիրոջն «յերկնքի արքայությունը» մտնելու: Այս  
խոսքերով քրիստոնեյությունն որինականություն և տա-  
լիս հարստությունն առանձին մարդկանց պատկանե-  
լուն ու իրավունք չի տալիս խելելու այն շահագործող-  
ների ձեռքից. մի՞թե՞ կարելի յե խել մեկից աստծու տը-  
ված պարզելը:

\*) Գրք «Ժողովող» Ե. զլ. 18,

Մի այլ տեղ ասված և գրեթե նույնը՝ «Մեկը հարս-  
տանում և իր շրջհայեցության ու խնայողության  
չնորհիվ և դա նրա պարզեի մի մասն է»<sup>\*\*</sup>): Այստեղ  
հետաքրքիր և այն, վոր հարստությունը պարզեի Ար-  
մասն և իր «շրջհայեցության ու խնայողության» հա-  
մար (այսինքն ժլատության ու դժուճության), իսկ  
մնացած մասն հարուստը պիտի ստանա ինչպիսի ուրիշ  
տեղ (հավանորեն յերկնքում): Ահա ձեզ և ատելություն  
դեպ հարուստը:

Ահա մի այլ ուսանելի տեղ ևս:

«Տերն և մարդկանց աղքատ դարձնում և հարստաց-  
նում»<sup>\*)</sup>): Ավետարանն այս առթիվ ավելի խիստ և հայ-  
տարարում. «Ով ունի նրան կարվի ու կավելանա, իսկ  
ով չունի՝ նրա ունեցածն էլ կկորսվի»<sup>\*\*\*)</sup>):

Ինչպես տեսնում ենք քրիստոնեական վարդապե-  
տությունը վճռականապես պաշտպանում և հարթատնե-  
րին և հարստությունը: Նա պաշտպանում և հարթու-  
թյունն յեկեղեցու հեղինակությամբ, նա շահագործող-  
հարուստներին վերցնում և իր հովանու տակ: Ի՞նչ կա-  
րող և պատասխանել սրան յեկեղեցականը կամ աղան-  
դավորը: Յեզրակացությունն այս շահագործող և:

Իսկ ինչո՞վ կարելի յե բացատրել «սուրբ գրոց» այս  
հակասությունները: Ինչո՞ւ նրանց մեջ մի յերեսում  
ասվում և մի բան, իսկ մյուս յերեսում հաստատվում  
և բացարձակապես հակառակը: Յեկեղեցականը ձեզ  
կպատասխանե, թե՛ «տիրոջ ուղիներն անքննելի յեն»,  
ուստի միք տքնի հասկանալ, թե ի՞նչ դիտավորու-

\*\*) Հեսու-Սիրաք Ժա. 16.

\*) Հեսու-սիրաք Ժա. 16.

\*\*) Ավետ. Մատթիոսի զլ. Իե. 29.

\*\*\*) Գրք դատավորաց Բ. 7.



թյամբ նա (այսինքն աստված) ներշնչել է ավետարանիչներին գրել այդպես և վ՛րջ այլ կերպ:

Մինչդեռ իսրայելական պատճառն այդ հակասությունները բոլորովին այլ է: Նախ «սուրբ գրոց» գրքերը կազմվել են դանադան ժամանակներում ու դանադան մարդկանց ձեռքով և ամեն մեկը նրանցից գրել է այնպես, ինչպես իրեն հաճելի յի յեղել: Յեվ յերկրորդ՝ յեկեղեցին միշտ աշխատել է սիրաշահել, հաճոյանայ հասարակության բոլոր դասերին: Ճնշվածների համար (խոսքով) — մի բան, ճնշողների, շահագործողների համար (և՛ խոսքով և՛ դործով) — մի այլ բան:

### ՅԵԿԵՂԵՅԻՆ ՈՒ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՎՐ

«Սուրբ գրոց» հրամանները հարուստներին ու նրբանց իշխանությունը պաշտպանելու վերաբերմամբ այժմ ել սրբությամբ կատարում են յեկեղեցին ու իր պաշտոնյաները:

Յեկեղեցականների ու աղանդավորների հասարակաքաղաքական դերն ըստ արժանվույն դնահատելու համար, անհրաժեշտ է նախ պարզել մեր ապրած շքրչանի կյությունը:

Մենք կառուցում ենք սոցիալիստական համայնք: Վերացնելով կատաղի դիմաբերությունն այն մարդկանց, վորոնց սոցիալիզմը դրկում է հնարավորությունից նստելու աշխատավորների վղին, մենք իրագործում ենք սոցիալիստական կառուցման հնգամյա պլանը: Մենք լարում ենք մեր բոլոր ուժերը, վորպեսզի հնգամյաին իրագործենք, վորքան կարելի յի շուտ, վորովհետև դիտենք, վոր այդ պլանի իրագործումն ուժեղ կերպով կամրացնի և կընդլայնի մեր անսեսության սոցիալիստական հիմունքները, կամրացնի մեր պաշտպա-

նունակությունն ու կրթելավի մասաների նյութական և կուլտուրական զրությունը: Իսկ ի՞նչ ենք անում հնգամյա պլանն արագ կերպով իրագործելու համար:

Մենք փոխանցում ենք արդյունաբերությունն անընդհատ արտադրության: Սա նշանակում է, վոր գործարաններն ու ֆաբրիկաները, վոր առաջ տարվա 360 որվանից 60-ը չեյին աշխատում, այժմ պիտի աշխատեն վորջ տարին անընդհատ:

Ի՞նչ կտա մեզ այդ: Արդյունաբերական արտադրանքի 20 տոկոս հափելումն: Այնտեղ, ուր մենք առաջ ստանում եյինք 100 մետր գործվածք, այժմ կըստանանք 120 մետր: Յեվ այս միմիայն շնորհիվ անընդհատի: Այնտեղ, ուր հին կարգերով մենք կարողանում եյինք տալ դյուզում 100 տրակտոր, անընդհատի ժամանակ կկարողանանք տալ 120:

Անընդհատ արտադրության անցնելու հետևանքով հնգամյակի ընթացքում լրացուցիչ կերպով արտադրության մեջ կմտնեն մոտ մի միլիոն բանվորներ, վոր զգալի կերպով կթուլացնի գործազրկությունը:

Հաստատուպես կարելի յի ստել, վոր անընդհատ արտադրության անցնելն ընդհանրապես զգալի կերպով արագացնում է շինարարության ընթացքն ու մոտեցնում սոցիալիզմին:

Մենք աշխատում ենք կարգի բերել արդյունաբերության մեջ աշխատանքի դիսցիպլինան: Մենք ձգտում ենք հասնել այն դիտակցության, վոր յուրաքանչյուր բանվոր արդյունաբերությանը վերաբերվի այնպես, ինչպես իր սեփական, հարազատ գործին: Յերբ մենք հասնենք դրան, այն ժամանակ արդյունաբերության մեջ այլևս չեն լինի պոչողականություն և գործալքումներ: Սակայն դա դեռևս քիչ է: Անհրաժեշտ է հասնել



այնպիսի դրուժյան, վոր յուրաքանչյուր բանվոր աշխատի իր ինքնատիրով, իր անձնական հոգածությամբ արդյունաբերության կարիքների վերաբերմամբ, ոգնի ոսցիոնալիզացիային, աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու ամեն կերպ ինքնարժեքի իջեցման: Լայն կերպով ծավալվում է սոցիալիստական մրցումը գործարանների, ցեխերի, անհատ բանվորների միջև: Աճում ու ամբանում են հարվածային բրիգադները: Բանվորութունը կառուցում է սոցիալիզմ:

Գյուղը դեպ սոցիալիզմ տանող ուղեցույց ճանապարհը հանդիսանում է գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Կուսակցության 16-րդ համագումարն հայտարարեց, վոր անհրաժեշտ է արագացնել գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Վերջին ժամանակներս Խորհրդային վոլջ Միության մեջ կոլեկտիվ տնտեսությունները կազմակերպումն սկսեց զարգանալ մինչև այժմ չտեսնված բուն թափով: Չքավոր ու միջակ գյուղացիությունն ավելի ու ավելի սկսեց դիտակցել, վոր իր միակ յեղը, կուլակների ստրկությունից աղատվելու միակ միջոցը՝ կոլեկտիվացումն է:

Աշխատավոր գյուղացիության ձգտումը դեպի կոլեկտիվներն այնքան ուժեղ էր, վոր հնգամյա պլանով նախադժված թավր միանգամայն անբավարար համարվեց: Հնգամյակի հենց առաջին տարում մենք կատարեցինք այնքան, վորքան նախատեսված էր իրագործել հինգ տարում: Անհրաժեշտ յեղով կոլեկտիվացման նոր պլան կազմել, ըստ վորում կյանքն անցավ մինչ այդ յեղած բոլոր նախորդումներից: Այդ նոր պլանը կազմեց մեր կուսակցության Կենտրոնական Գործադիր կոմիտեն, վորի վորոշման մեջ ասված է՝

«Հնգամյակի սահմաններում ցանքի տարածությունը 20 տոկոսի կոլեկտիվացման փոխարեն, վոր նախատեսված էր հնգամյա պլանով, մենք կարող ենք լուծել գյուղացիական տնտեսությունների ահադին մեծամասնության կոլեկտիվացման հարցը»:

Այլ կերպ ասած՝ մենք նպատակ ենք դնում հնգամյակի ընթացքում կոլեկտիվացնել մեր վոլջ հողագործությունը: Այդպիսով հնգամյակի վերջին վերացած կլինի սոցիալիզմի ճանապարհին արգելք հանդիսացող գլխավորադույն խոչնդոտությունից մեկը.— գյուղատնտեսությունը՝ փոշիացած, մանր, մասնավոր, «ամեն բոպե կապիտալիզմ ծնող» (Լենին) դրուժյունից կվերածվի խոչորի, համայնականի, սոցիալիստականի:

Կուսակցության ու Խորհրդային իշխանության լարված աշխատանքը գյուղատնտեսությունը կոլեկտիվացնելու խնդրում կատարի դիմադրության է հանդիպում գյուղի կուլակային, հակահեղատիտական սարերի կողմից: Այլ կերպ չէր ել կարող լինել: Չէ՞ վոր գյուղատնտեսության կոլեկտիվացումը— դա նշանակում է կուլակության վաճառում իրրե դասակարգի:

Ինչպես հայտնի յե, կուսակցությունը դործնական նպատակ է դրել ըստ կարելույն կարճ ժամանակամիջոցում համատարած կոլեկտիվացման շրջաններում լեկվիզացիայի յենթարկել կուլակությանն իրրե դասակարգի: Պարզ է, վոր կուլակությունն իր բոլոր ուժերով պիտի դիմադրի դրան ու առանց կովի չալտի տա իր դիրքերը: Այդ պատճառով ել ներկայիս գյուղում խիստ սրված է դասակարգային պայքարը, վորի մեջ միայն մի դիրք կարելի յե բռնել՝ կամ խորհրդային իշխանության, հնգամյակի, գյուղատնտեսության



հորեկտիվացման, կոմունիզմի կողմը կամ դրա հակա-  
ռակ, դրա դեմ: Միջին ճանապարհ չի կարող լինել այս-  
տեղ:

Հացամթերումներն էլ մեզ մոտ անցան դասակար-  
գային պայքարի այդպիսի սուր պայմաններում: Հացը  
անհրաժեշտ է պրոլետարական քաղաքին—առանց վորի  
բանվոր դասակարգը չի կարող իրազործել այն ահա-  
զին խնդիրները, վոր դրեւ է նրա ուսերին պատմու-  
թյունը: Կուլակներն ու յենթակուլակներն ամեն կերպ  
աշխատում են թաղցնել իրենց հացի ավելցուկը, վոր-  
պեսոյի հարմար ընդհանր ծախսն այն մասնավորին սպե-  
կուլյատիվ զներով: Հյուսիսը բանվոր դասին սովով—  
ահա կուլակութեան նպատակը: Իհարկե, դա բնավ չի  
հաջողվի նրան: Դրան ապացույց կարող է ծառայել  
այն, վոր հացամթերման պլանը Խորհրդային վողջ  
Միութեան մեջ 1929 թվին իրազործված է ամբողջու-  
մին 100 տոկոսով:

Ի՞նչ դերք են բռնել յեկեղեցականները դասակար-  
գային այս կովում:

Ամեն տեղ ու ամեն ժամանակ, ուր ինչով կարող  
են միայն յեկեղեցական ու այլ կրոնական կաղմակեր-  
պությունները՝ դուրս են յեկել միշտ Խորհրդային իշ-  
խանութեան ձեռնարկների դեմ, իրենց շուրջը համա-  
խմբելով այն ամենը, ինչ հակահեղուփախական է յերկ-  
րում: «Возбужник»-ի («Անաստված») ամեն մի  
համարը զարդարված է յեկեղեցականների հակահե-  
ղափոխական գործունեութեան փաստերով:

Քաղաքում նրանք դործում են վո՛չ այնքան բա-  
ցահայտ. վասննում են առանձնապես բացվել Խորհրդ-  
գային հասարակական բոլոր կաղմակերպությունների  
աչքի առաջ, բացի այդ, բանվորների շրջանում նրանք

այնքան էլ լայն ասպարեղ չունեն: Սակայն վնասում  
են և այստեղ—ինչով կարողանում են:

«Անցյալ տարվա սեպտեմբերի 20-ին Մարա-  
սանովի անվան (Պավլովա) դործարանի բանվոր  
Կլեպիկովը աշխատանքից դնաց առանց կանգնեց-  
նելու իր դաղդյակի մատորը, վորի հետևանքով  
այրվեց առանցքախալն ու կանց առաջ դաղգյակը:  
Սեպտեմբերի 29-ին, յերբ դործարանի բանվորներն  
ու ծառայողներն աշխատում էին պաշտպանու-  
թեան ֆոնդի ողտին, Կլեպիկովն աշխատանքի չե-  
կավ: Մինչ այդ նա քարոզում էր, թե կիրակի  
որերը աշխատանքի չպետք է դալ: Յերեվաց, վոր  
Կլեպիկովը Պավլովայի ավետարանականների ա-  
ռաջնորդն է: Իր կրոնական քարոզները նա վաղուց  
համեմում էր ուղղակի հակահեղափոխութեամբ:  
Կաղմակերպում էր «հոգեպարար» դրույցներ ու  
միաժամանակ դրաղվում լլիլը բամբասանքով  
Խորհրդային իշխանութեան դեմ: Մոտ ժամանակ-  
ներս նա իր աղանդավորակախ աշխատանքների  
համար արտասահմանից ստացավ 300 ռուբլի, վորը  
ինքն անձամբ խոստովանվեց:

Մարսանովի անվան դործարանի բանվորներն  
ու ծառայողներն իրենց ընդհանուր ժողովում վո-  
րոչեցին արտաքսել Կլեպիկովին դործարանից ու  
արհմիութենական անդամութեանից:

Նույն ժողովում արտաքսվեց արհմիութեանից և  
բանվոր Տվորդովն իր հակահեղափոխական քա-  
րոզների համար: Տվորդովն ավետարանական է,  
զյուղում ունի կայուն տնտեսութեան»:

Այս դեպքն ամեն կողմից բնորոշ է և նրանով, վոր  
աղանդավորների առաջնորդը պարսպում է բացահայտ  
փնասարարութեամբ, և նրանով, վոր հակահեղափո-  
խական ազխտացիա յե վարում բանվորների մեջ, բայց  
դրա համար նա փող է ստանում արտասահմանից (կա-



պիտալիստներին, (իհարկե), բայց թե ինչպես են վերապերում դրան բանվորները: Բայց ամեն տեղ այդպիսի վճռական հակահարված չեն ստանում աղանդավորներն ու յեկեղեցականները:

«Ավետարանականներն հաստատուն հիմնավորվեցին Տվերի «Պրոլետարկա» դործարանի քիմիական լաբորատորիայում: Յերկար տարիներ նրանք այնտեղ բացարձակապես սանձում էին բանվորների մեջ հակախորհրդային պրոպագանդա, դուրս ելին դալիս սոցմըցման և սոհասարակ ամեն մի կամպանիայի դեմ, վոր կամենում էին անցկացնել հասարակական կազմակերպությունները: Աշխատանքի ժամանակ նրանք առանց արդելքի արտատանում էին փտանավորներ ու յերգում կրոնական յերգեր: Արտադրական ժամերին մոտենում էին բանվորներին ու ասում՝

— Աշխարհը գնում է դեպի կործանում: Բոլորը ապականվել են մեղքերի մեջ ու ամենքին սպառնում են սոսկալի տանջանքներ այն աշխարհում: Յեկե՛ք մեզ մոտ, յեկե՛ք մեր Գրիստոսի մոտ, նա կհանդատացնի ձեզ: Միայն դրա մեջն է փրկությունը:

Վարչությունը չէր խանդարում ավետարանականներին, համարելով նրանց աշխատասեր բանվորներ:

Աղանդավորները կորաղացան իրենց շարքերը դրավել և մի քանի կուսակցականներն ու կոմյուրիտականներն: Կոմյուրիտուհի Կոլլեցովան դարձավ նրանց ձայնատար փողը (խապարբզանը): Նա սկսեց կազմալուծել այն քաղկամպանիաները, վոր տարվում էին ցեխերում: Յերկու ուրիշ կոմյուրիտուհիներ— Գրամովան ու Տարարայեվան դիմում են տալիս դուրս դալու Կոմյուրիտիությունից:

Յերբ բանվորուհի Վրովինան 100 ուրբու փո-

նառություն եր գրվում Կոլլեցովան բոլորի ներկայությամբ ասում է՝

— Ի դուր ես գրվում, շուտով պատերազմ է լինելու ու բոլոր փողերը կորչելու յեն:

Ավետարանականներին հակահարված տվող չեղավ, վորի հետևանքով յաբորատորիան չընդունեց սոցմըցման հրավեր: Միքանի կոմունիստների հարվածային բրիգադա կազմելու փորձը յաբորատորիայում անհաջողության հանդիպեց: Բնորոշ այն է, վիր քիմիական լաբորատորիան «Պրոլետարկա» դործարանի չթի բաժանմունքում միակ արհեստանոցն է, ուր չծավալվեց սոցմըցումը»:

Անընդհատ անցնելն առանձնապես կատաղեցնում է տերտերականությանը: Յեզվ գարմանալի չէ. անընդհատը հանդիսանում է յաստազույն հարված յեկեղեցականներին գրպանին: Անցյալի դիրկն են ընկնում տերտերական բոլոր տոները, յերբ այնքան հեշտ է ծծել բանվորի գրպանից վերջին կոպեկը, այն բանվորի, վոր դեռ կրոնի դեյության մեջ է: Սոցիալիստական արդյունարերության առաջ ընդարձակ հորիզոններ բանալով, բարելավելով բանվոր դասակարգի գրությունը, անընդհատը միաժամանակ ուժեղ հարված է հասցնում կրոնին: Ահա թե ինչու աղանդավորներն ու յեկեղեցականներն այդպես թշնամաբար են տրամադրված այդ հեղախոխական միջոցառման դեմ:

«Մոտ ուրբա Շլիսելբուրգի դործարաններից մեկում կրոնավորները մի նամակ են տարածում, վորի մեջ ապիտացիա յեն մղում անընդհատ շարաթվա դեմ, անվանելով այն «հակաքրիստոնեական ձեռնարկ» ու պատմում, թե՛ ինչպես «յեղբայրներից» մեկին յերաղում իբր յերեւացել է ինքը Գրիստոս ու այսպես արած, «բողոք» հայտնել անընդհատ շարաթվան անցնելու դեմ, ի միջի այլոց յոստանալով շուտով նորից վերադառնալ յերկիր»:



Գյուղերում յեկեղեցականներն իրենց պահում են ա-  
վելի լուրջ:

Ահա թե ինչպես են վերաբերվում նրանք գյուղա-  
տնտեսութեան կոլեկտիվացմանը.

«Պետրուշինսկու (Որեխովո-Չույսկի շրջանի)  
կոլտոյի կազմակերպումը կատարեցրեց գյուղի  
հակախորհրդային տարրերին: Տեղական կուլակ  
Գալբրեյելովները Տրեֆիլի տերտերի գլխավո-  
րութեամբ կոլտոյի կազմակերպման հենց սկզբի  
հակահեղափոխական ագիտացիա սկսեցին նրա  
դեմ:

— Կոլտոյները—սատանի դորձ են, արակառու-  
ները՝ նեոի (հակաքրիստոնեական): Կոլտոյնիկե  
անդամազբույժը նեոի կ'էին և կրում:

1929 թվի հոկտեմբերի 3-ին Պետրուշինո գյու-  
ղում մեծ հրդեհ պատահեց, վորը վոչնչացրեց  
Պետրուշինի կոլտոյնիկներին պատկանող 42 գյու-  
ղական անոթ: Կրակի մեջ վոչնչացավ կոլտոյի պա-  
րենախորհման վողջ պաշայն, ինչպես և անասուն-  
ների կերը: Վնասը հասնում էր մինչև 100 հազար  
ռուբլու:

Հրդեհը ծագեց Պետրուշինի կոլտոյի նախա-  
դահին պատկանող մարազից, վոր կրակել էին  
դիմամբ: Փչում էր խիստ քամին ու վողջ գյուղը  
2-3 ժամում ներկայացնում էր իրենից համատա-  
րամ խարույկ:

Որեխովո-Չույսկի շրջանային կոմիտեան ջըն-  
նելով պատճառները, հաստատեց, վոր հրդեհը  
զցված է դիտավորյալ կերպով: Կատկածվում են մի  
խումբ տեղական կուլակներ՝ նախկին դործարա-  
նատեր Գալբրեյելները (յեկեղեցական խորհրդի  
անդամներ) տեղական քահանա Տրեֆիլիայի գլու-  
խավորութեամբ, վորանք ձերբակալված են»:

Այստեղ մենք տեսնում ենք մի որինակ այն բանի,

թե ինչպես յեկեղեցականներն ակառի կերպով գլխա-  
գրում են կոլեկտիվացմանը, դիմելով նույնիսկ ամե-  
նահանցավոր միջոցներին: Բայց յերբմն նրանք գոր-  
ծում են այլ կերպ. կոլտոյնիկ դիմակ հագնելով, կա-  
մացուկ սողոսկում են կոլտոյի մեջ ու աշխատում ներ-  
սից քայքայել կոլտոյը: Ահա ձեզ մի քանի որինակ.

«Իովոյնի ավանում (Որենբուրգի շրջան) մե-  
քենայական քնկերութեան մեջ խցկվել են բար-  
տխտներ: Ամբանալով այնտեղ, նրանք սկսում են  
դուրս քել չքավորներին: «Կարմիր պարտիզան»  
կոլտոյի մեջ մուտք է դորձում սուրբ ձեացող յե-  
կեղեցական Նեստերովը: Յերբ կոլտոյի չքավո-  
րութեանը մտալիք էր հավաքել կարմիր բանա-  
կայինների ընտանիքների հացը, նա բողբոջեց, թե  
— Անաստովածների ընտանիքներին մենք չենք  
ոդնի...»

Նրան պաշտպանեցին կուլակները: Այդպիսով  
կոլտոյի չքավորութեան գիտավորութեանները  
խանդարվեցին»:

«Փորձված «Հայամշակ» կոլտոյի մեջ մասն  
մի քանի կուլակներ: Նրանք զբեթե բոլորն էլ ու-  
նեն սեփական ջրաղաց ու կալիչ մեքենա: Կոլտո-  
յի մեջ սե աշխատանք չեն տանում նրանք, այլ  
դրա համար կոլտոյի հալվին վարձում են բառ-  
րակներ: Կոլտոյ մանիլիս կուլակներից վոժմանք  
իրենց դուշի մի մտաք թաղցրին: Այդ կոլտոյի  
դեկտավարում է խոչոր կուլակի մուգոմիակինը, վոր  
միտամամակ ակառիլ յեկեղեցական է ու ամեն  
կերպ աշխատում է թույլ չալ չքավորներին մըռ-  
նելու կոլտոյի մեջ: Նրա ոգնականն է կուլակ ու  
յեկեղեցական Յայակովը, վոր կոլտոյում պարա-  
սում է հենց միայն նրանով, վոր փառաբանում  
է ասածուն և հայհոյում Խորհրդային իշխանու-  
թեան: Նրա կուլակային ագիտացիայի հիմնական  
լուրնդն է՝ «չօրսիք, հնազանդիլի հարուստին»:

1783



15550-57



Մյուս բոլոր կոլխոզներին մեջ խցկվել է յայն կուլակ-  
յեկեղեցականները, առաջնակարգ դեր է յայն խաղում  
աշխատել և իսկապես իրենց ձեռքն է յայն վերցրել ամբող-  
ջը և ծառայեցնում է յայն իրենց նպատակներին:

«Մոտ որևերս Մեդոնի Սինեմվոր» կոմմունայում  
(Ռուբալի շրջան) ձեռքակալվեց վնասարար քա-  
հանա կարիներ: Կարիներ խցկվել և կոմմունայի  
մեջ ուրիշի անունով, իբրև կենդանարույժ: Իր  
վնասարար աշխատանքն այդ «կենդանարույժն»  
սկսում է կենդանիներին թունավորելով: Նրան հա-  
ջողվում է թունավորել վեց խոշոր յեղջուրավոր  
անասուն և նրա շնորհիվ շատ կովեր վիժում են:  
Ձերբակալման փամանակ վնասարարի մոտ գտնը-  
ման և սարիխին և այլ թույններ, նույնպես և գրա-  
դուրթյուն տեղական քահանաների հետ:

Համառ կերպով յեկեղեցականներն աշխատում է-  
լին ու աշխատում են խանդարել հացամթերմանը: Առաջ  
կերենը միայն մի փաստ, բայց բավական պերճախոս:

«Որնբուրգի շրջանի Կամենոպոլենի ստան-  
ցիայի կուլակները, թագնված կրոնի քոլի տակ,  
հակախորհրդային ոգիտացիայով աշխատում է յայն  
խանդարել հացամթերումը: Հակախորհրդային  
դադանի աշխատցիայի մեջ իր հնարագիտությամբ  
առանձնապես աչքի յեր ընկնում Պեչորկինը:

Պեչորկինը անցյալում առաջին կուլակն է յե-  
ղել ստանցիայում: Մինչ հեղափոխությունը նրա  
մոտ աշխատելիս են յեղել մի քանի տանյակ բատ-  
րակներ: Պեչորկինն հասկանում է, վոր բացար-  
ձակորեն քարոզել հացամթերման դեմ՝ անողուտ է,  
բայտ վորում չեն լսելու իրան, բացի այդ և վտան-  
գավոր է: Ահա այդ պատճառով էլ Պեչորկինը դի-  
մում է կրոնի առջևցությանը: Նա այդ անում է  
չառ խորամանկորեն ու գաղտնի: Ինքը մի կողմ և  
քաշվում, իսկ իրա փոխարեն քարոզում և սղջիկը՝

Կատերինան ավետարանի ողնությամբ: Նա չըջում  
է տնեց-տուն, կանանց համաքում խումբ-խումբ  
ու կարողում ավետարանից՝ «Բարիք արա խոնարհ-  
ներին ու մի՛ տա անորեններին. փակիր նրա առաջ  
հացիդ շտեմարանն ու մի՛ տա նրան, վորպեսզի դը-  
բանով նա չուժեղանա քեզանից»: Հենց այդտեղ էլ  
ավելացրած է՝ «Հիշատակ դիմվորին»: «1916 թվի  
գատիկը» մի շարք աղոթքներով և կայսեր ու իր  
ընտանիքի պատկերներով: Կարգալով ավետարանը  
Կատերինան համոզում է չտալ հացը «անորեննե-  
րին»—սուրբ դիրքն այդպես է ասում, և հենց այդ-  
տեղ էլ հառաչելով, ցույց տալիս արյունաթաթախ  
Նիկալայի պատկերը»:

Հացամթերման որինակից մենք պարզ տեսնում ենք,  
վոր բանվոր դասակարգի և գյուղի աշխատավոր տար-  
րերի կողմից կուլակներին դեմ տարվող պայքարի մեջ  
քրիստոնեական բոլոր գույնի յեկեղեցիները, ինչպես և  
բոլոր մյուս կրոնական կազմակերպությունները, կանդ-  
նած են հոգուտ կուլակների, հոգուտ դեպի կապիտա-  
լիզմի վերադարձը: Ամեն կերպ նա կոմուն է աջ մի-  
ջոցառումների դեմ, վոր կուսակցությունն ու խորհր-  
դային էշխատությունն անց են կացնում սոցիալիստական  
հասարակություն կառուցելիս: Դա վոչ վոքի չի դար-  
մացնում, այլ կերպ չէր էլ կարող լինել: Քրիստոնեա-  
կան կրոնն, ինչպես և ամեն մի կրոն ծառայում է կու-  
լակներին ու շահագործողներին:

Կուլակների ու յեկեղեցականների ցանկություննե-  
րը շատ պարզ կերպով ձվեակերպել է ավետարանական  
Զարխատովը, Պունդա գյուղի ժողովում: Նա առաջար-  
կում է ընդունել այսպիսի վորոշում՝

- 1) Վիճակային բյուջեն կրճատել 50 տոկոսով,
- 2) ազատություն տալ մասնավոր առևտրին, 3) առա-



ջարկել խորհրդային իշխանությանը թողնել բանվորների շոյեւրը, 4) դժուարացիական տնտեսության կողմէ կտրվացումը, իբրև ուսուցիչ, թողնել կյանքի մեջ անցկացնելը»:

Նույնպիսի առաջարկով մոտ ժամանակներս գլխի են Խ.Ս.Չ.Ս-ի, Ժողովախորհին ու Կենտրոնը համին աղանդավորների յերկու հայտնի ներկայացուցիչներ՝ Տալատյան Ծրեղուբովին ու Նովինկովը: Յուրաքանչյուր դիտակից բանվորի համար պարզ է, վր աղանդավորների այդ ծրագրերը, բացարձակ կուլակային և հակահեղափոխական ծրագրեր է:

### Ա.ՂԱՆԴԱՎՈՐՍ.ԿԱՆ «ԿՈՄՄՈՒՆՍՏԵՐ»

Նախնական քրիստոնեաներին պատկերացնելով իբրև իսկական կոմմունիստներ, աղանդավորները կոչ են անում վերադառնալ նախնի, սկզբնական, իբր թե կոմմունիստական քրիստոնեություն:

Լուծենք այս խնդիրը: Այն, թե իբր առաջին քրիստոնեաները վարել են կոմմունիստական կյանք. դա այն բաղձաթիվ հեղաթնկից մեկն է, վորոնց մեջ ճշմարտության նշույլ անդամ չկա: Միանգամայն ճիշտ կերպով աղացուցված է, վոր նախնի՝ առաջին հարյուրամյա քրիստոնեաների մեջ նույնպես տեղի ունեւր աղքատների ու հարուստների բաժանում, վոր հարուստներն ունեյին բաղձաթիվ ստրուկներ ու իրենց համար շատ հարմար կերպով սղտվում էյին ստրուկների աշխատանքով: Դերմանական պրոֆեսոր Ազայլբերտ Կաստյն այս հարցի առթիվ գրել է մի ամբողջ ուսումնասիրություն, ուր և ապացուցել է, վոր նախնի քրիս-

տոնեաները վո՛չ միայն ունեցել են ստրուկներ, այլ և վարվել են նրանց հետ դադանարար: Հենց միայն այս էլ բավական պարզ կերպով ցույց է տալիս, վոր նախնի քրիստոնեաների կյանքը բնավ չի յեղել կազմակերպված կոմմունիստություն:

Սակայն աղանդավորները վո՛չ միայն պնդում են նախնի քրիստոնեաների կյանքի կոմմունիստական բյուրյթի մասին կազմված լեգենդը, այլ և հայտարարում են, վոր իրենց համայնքները վարում են ամենաիսկական կոմմունիստական կյանք: Հետաքրքիր է, այնուամենայնիվ, ստուգել, թե աղանդավորների խոսքերը համապատասխանո՞ւմ են արդյոք իրենց գործերին:

Մինչև վերջին ժամանակներս Լենինգրադից վա՛հ հեռու դոյություն ունեւր աղանդավոր չուրիկովցիների «կոմմունան»: «Կոմմունան» կոչվում էր «Բիչ» («խարազան») (յեղբայր Իվան Չուրիկով) և այդ անունն անդամներից մեծամասնության վերաբերմամբ միանգամայն արդարացնում էր ինքն իրեն: Ահա թե ինչ է պատմում նախկին չուրիկովուհի Մատինան՝

«Չուրիկովի բնակավայրում—բոլորն ստրուկներ են: Ստրուկները «կոմմունայում» ախշատում են՝ ամառն առավոտյան ժամը 4-ից, իսկ ձմեռը 7-ից: Իսկ անասնապահ կանայք՝ առավոտյան 4-ից մինչև 8 1/2, իսկ ամառն յերբեմն նույնիսկ գիշերվա ժամը 12-ը: Աշխատանքի համար փող վո՛չ վո՛չ չէ ստանում:

Առավոտյան ժամը 6-ին ձմեռն, իսկ 5 1/2-ին՝ ամառը տալիս են թեյ հացով, շաքար չի տրվում. ցերեկվա 12-ին՝ ճաշ—թթու կաղամբից, կաթով մի փոքր ներկած ապուր, իսկ պատ ուրերին համեմած հոտած սեւյողկով. յերկրորդ տեսակը տալիս են փլավ, այսինքն կարտոֆիլի պյուրե՝ հետը մի փոքր



կորեկի ճափար. հետո դարձյալ թեյ. բայց այս ան-  
գամ չորս կտոր շաքարով... սկայն այնքան փոքր  
կտորներ, վոր չը դիտես ինչպես բերանդ դնես:  
Յնրեկոյան՝ ընթրիք. այսինքն դարձյալ ապուր:  
Հանդատութիւնն հազվագլուտ բան է:

Իսկ ինչպե՞ս եր ապուրեմ ինքն՝ «յեղբայրը»: Այս  
մասին պատմում է մի ուրիշ նախկին չուրիկովեց:

«Մեզ համար չափազանց զարմանալի յեր, թե  
ինչո՞ւ յեղբայրը մեզ տանջում է քաղցով, մինչդեռ  
ինքը թուրիկները»\*) հետ արաքվելու չափ ուտում է  
ամեն ինչ: Վերելում նրա մոտ ամեն տեսակ մը-  
թերքներ այնքան կային, վորնայն ին անգամ ասրա-  
փելի յեր. — ամեն տեսակի ձկնեղեն, զանազան պա-  
հածոներ, ծափերով ու տակառներով յուղ, արկը-  
ներով շոկոլադ: Նրա «սպիտակ» խոհանոցում յեփ-  
վում էին ամենահարուստ ուտելիքներ»:

Վո՛չ թե կոմունիստ, այլ ամենատիրակաւ կալ-  
վածատիրական մի ազարակ եր դա, ուր կու ու բեզյա-  
ռի մեջ զյուղացիք յոթ զաթ քրտինք էյին թափում ա-  
ղայի համար, իսկ աղա-կալվածատերը (տվյալ դեպ-  
քում «յեղբայրն» ու «թուրիկները») ձարպակալել  
էյին:

Շահադոթման այդ բունը ներկայումս կործանված  
է ու նրա տեղը կազմակերպված է բանջարա-կենդանա-  
բուծական կոլտնտեսութիւն «Նոր ուղի» անունով:

Չուրիկովիները, սակայն, անձնուր չեն լինում:  
Ահա թե ինչ է պատմում այդ կոլտնտեսութիւն անդամ-  
ներից մեկը, Պուտիլովյան գործարանի մի բանվոր:

«Ամեն քայլափոխում հենց այդպես աշխատում  
են վնասել դադազած ծերունիներն ու պառաւները,

չուրիկովյան ժոանդութիւնը: Ճիշտ է, այժմ մի  
փոքր թեթեւացել է, բայց առաջ ուղղակի վոչ վո-  
քի անցնելու չէին թողնում: Ուր վոտդ դնում ես՝  
կամ ապակիներ են շաղ ափել, կամ թուղթ դցել:  
Բաց ես անում՝ ի՞նչ է գրած՝ «յեթե չվերադար-  
ձնեք յեղբորը՝ կը մորթենք», կամ «չ բընաք՝ կըս-  
պանենք»: Պատահում եր և ավելի վատը. դադա-  
դոդի մտնում էյին մեզ մոտ, կոտորատում մեքենա-  
ները, փչացնում վորեւե բան, իսկ մենք ստիպված  
էյինք լինում նստել ու կարկատել»:

Ահա այսպես է ազանդավորների իսկական քրիս-  
տոնեական կոմունիզմը:

Դոխարորների մասին յերբեմն ասում էյին, թե՛  
դրանք արդեն իսկական կոմունիստներ են, նրանց մոտ  
ամեն ինչ ընդհանուր է, վոր նրանց մեջ տիրում է իր-  
կատար հովասարութիւն: Ստուգելիս դուրս յեկավ,  
վոր այդ ել հեքիաթ է: Ահա փաստերը.

«Դոխարորների 8 դուղում 28 տնտեսութիւն  
այնքան աղքատ են, վոր միանգամայն աղատված  
են հարկից, բայց և կան դոխարորներ, վորոնք  
հարյուրավոր վոչխարներ, տանրակերով խոչոր  
յեղջուրավոր անասուններ ու ձիեր ունեն: Այդ  
կուրակների հարատեսութիւնն այնքան մեծ է, վոր  
առանց իրենց համար զգալի փնտի 200-300 ուղը-  
յի ու յերբեմն ել ավելի հարկ են տալիս: Ռատիո-  
նովկայում մի դոխարոր վճարում է 526 ու. հարկ:  
Հենց նրա կողքին 38 տնտեսութիւն հարկագրված  
են 5 ուղբուց ել պակաս... Հետևապես հովասա-  
րութիւն մասին խոսք անգամ չի կարող լինել: Դո-  
խարորների մեջ, ինչպես և ամեն տեղ, կան և՛ աղ-  
քատներ, և՛ կուրակներ»:

Մրանից լավ չեն և ավտարամեխանիկ «կոմ-  
ունիստները». ահա որինակի համար յերկու «կոմունիստ-  
ները»:

\*) Մի ամբողջ կազմ աղախիններ ու կենսակցուհիներ ունեք  
Չուրիկովը:



ներ», վոր ամետարանականների մտա հարմար-  
վում են որինակելի — «Բեթանիա» և «Առաջուրյան ար-  
չալույս» կոմմունաները: Այդ «կոմմունաները» գլխավոր-  
բողներն են՝ նախկին առեւտրական և կուլակ Վաչիկ-  
տոնով, նախկին անտառա-արդյունաբերող Վինադրա-  
ով, նախկին կարվածատեր և Սմերդինի կոոպերատիվի  
փողերը վատնող Բեկմիրով, Բուտիրովի քարահանքի  
նախկին կառավարիչ Ջախարով, նախկին կարվածատի-  
ուհի Գեյլչեբման, վայախ առեւտրական Սրժանով,  
նախկին բերդավարդիական սպա Չլոբին, նախկին հա-  
սարակաց տուն պահող Պիտարյով: 1929 թվի մարտի  
11-ին բոլորը դատի տակ բնկան սպեկուլյացիայի ու  
այլ խարդախությունները համար:

Կոմմունայի և «յեղբայրության» անվան տակ գո-  
յություն ունեցող աղանդավորական կոմմունաները մեծ  
մասամբ կեղծ-կոմմունաներ են, ուր խափված աշխա-  
տավորները յոթնապատիկ քրտիք են թափում ու աշխա-  
տում ղեկավարները—«յեղբայրների» ու «յերեցների»  
համար: Կոմմունիզմի հոտն անդամ չկա այնտեղ:

Ավետարանականների, բարոխսանների, աստիեն-  
ախատների և մյուս աղանդավորների համայնքի դուռն  
անցած են լինում սովորաբար նախկին ու ներկա առեւ-  
տրականներ և կուլակներ, նախկին գործարանատերեր,  
շարական ու սովորակ բանակային սպաներ, «ոռու ժո-  
ղովրդական միության» նախկին անդամներ, հսերներ  
և ուրիշները: Այդ տեսանք մենք վերելում առաջ բեր-  
ված «ավետարանականների կոմմունայի» որինակից:  
Առաջ բերենք մի քանի փոստ ևս: Ահա ձեր առաջն են  
աղանդավոր գործիչները ղեմքերը:

«Կոտեյնիկի դավատի Տեյլնյատ դյուրացի կու-  
լակ ու բապտիստական երեց Պիմեն Իվանովիչ

ժենիտովը, ունի 3 խրճիթ, բարձրագույն անասուն-  
ներ և 80 դուրս փեթակ: Գաղաքացիական կռիվնե-  
րի ժամանակ բանակ զնալուց հրաժարվեց: Չնչին  
գնով վարձակալում էր ու տիրապետում ուրիշների  
հողաբաժինները: Ողտադորձում էր ալյուրների ու  
կարմիր բանակայինները կանանց ձրի աշխատան-  
քը: Տարիական-վաշխառուական պայմաններով  
հաց էր տալիս սովածներին ցանաքի և ուտելու  
համար: Ամեն դեպքում պարտապաններից վերց-  
նում էր ստորագրություններ:

Այդ ստորագրությունների համաձայն չքավոր-  
ներն էրենց աշխատանքով պիտի վճարեին այդ սո-  
վի—ստրկական պարտքերը»:

«Տվերի Նաուրյան չրձանի Ալի-Կուլ դյուրացի  
կուլակ ու բապտիստական քարոզիչ Իվան Գրիգո-  
րեվիչ Նիկոլայովը սովի տարիներում ամենքին  
մերժում էր հաց տալ, իսկ հետո յերեվաց, վոր նա  
հացը թաղած է յեղել հորերում ու կեսից ավելին  
վիթել է»:

«Ավետարանականների Ամուր-Նիժեդնեպրյան  
համայնքի (Ուկրայնայում) քարոզիչ Կասյան Տրե-  
բուչների սեփականեց փականագործ Իվան Կորժի  
ներ հող և պարապում էր հացի սպեկուլյացիայով:  
Յերկու մեշոկ ալյուրի փոխարեն «յեղբայր» Տրե-  
բուչին սեփականեց փականագործ Իվան Կորժի  
ամբողջ տունը: Իվան Կորժան յոթն յերեխա ուներ,  
վորոնց կերակրելու համար վոչինչ չուներ: Փոքր  
երեքի հետ «յեղբայր» Տրեբուչին չէր կամենում  
փոխել ալյուրը: Սակայն խորհրդային դատարան  
ազատեց Իվան Կորժին այդ փորձանքից ու տունը  
վերադարձրեց իրեն»:

### Ա.ՂԱՆԳՍ.ՎՈՐՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Արտասահմանում աղանդավորների դավանությանն  
են պոտկանում ամենահարուստ ու խոշոր կապիտալիստ-



ներից իմպերիալիստական պետութիւններէ քաղաքական ղեկավարներէջ շատերն, ինչպէս ավտոմորելլային արքա Ֆորդը, նալթային թագաւոր Ռեկֆելլերը, Անգլիայի բուրժուական ամենակարեւոր քաղաքագետներէջ մեկը՝ Լլյոդ-Պորլը (բոլոր յերեքն եւ բապտիստներն) :

Բապտիստներն, ինչպէս հայտնի յե, համարում են, թէ իրենք ապրում են ըստ ավետարանի : Պե՞տք է գարմանալ, սակայն, վոր Ֆորդն, որինալ, անգամ չի մըտածում հետեւել «Քրիստոսի պատգամին», վոր պատվիրում է իր հետեւորդներին «իրենց կարողութունը բաժանել աղքատներին» : Քրիստոսյա կապիտալիստները, վոր բանվորներին շահագործելով առասպելական հարսութիւններ են դիզել, բնաւ չեն վախենում այն պատիժներէջ ու պատուհաններէջ, վորոնցով սպառնում են իրենց «սուրբ» գրքի մի քանի տեղերում : Նրանք չա՞ր լով դիտեն, վոր այդ ամենը գրված է այն խեղճերի համար, վորոնք դժգոհում են իրենց մուրացիկ դրութիւնից, վորոնք նախանձում են հարուստներին ու վրդովվում անարդար հասարակակաղմի դեմ :

Իս գրված է նրա համար, վոր ցույց արվի աղքատներին, ճնշվածներին ու հարստահարվողներին, թէ նրանք չպիտի դժգոհեն, չպիտի դուրս դան շահագործողների, հարստահարիչների ու հարուստների դեմ, ըստ վորում աստված աղքատները, խեղճերը կողմն է, վորովհետեւ այն աշխարհում իրենց համար պարտաւորում է հավիտենական յերանութիւն, իսկ հարուստների համար՝ հավիտենական տանջանքներ :

Այս ամենը քարոզվում է բացառապէս այն նպատակով, վորպէսզի պաշտպանեն ամենաքրիստոսյա արյունարբուների դրականները սոված մասսաների հուզմունքից :

Կապիտալիստները հասկանում են, թէ ի՞նչպիսի հսկայական նշանակութիւն ունի յեկեղեցին իրենց համար ու դրա համար էլ ոգնում են նրան ամեն կերպ, ինչով կարող են : Ֆորդերն ու Ռեկֆելլերները միլիոններ են ծախում յեկեղեցու ու քարոզների վրա : Առանձնապէս հարգի յեն նրանց մոտ այն քարոզիչները, վորոնք մյուսներից ավելի հաջող են կարողանում խաբել բանվորներին : Այսպէս որինալ՝ շատ բարձր կարողութիւն ցույց տվեց այդ գործում ամերիկական հայտնի քարոզիչ Բիլլի Սինգելը : Նա չըջում է բոլոր այն տեղերն, ուր գործադուլներ են ծաղում ու ասածու անունով համոզում բանվորներին դադարեցնել գործադուլն ու հրպտակվել տերերին : Կապիտալիստներն, իհարկէ, այդ սուրբ օրիկային ձեռքերի վրա յեն ման ածում : Մասնավորապէս Ռեկֆելլերը Սինգելի շտերյկերիսերյան մի հաջող գործարքից հետո, լրագրողներին հրավիրեց իր մոտ և սկսեց գովել այդ ավետարանականին : Ահա թէ ինչ է դրում այդ մասին «Թայմս» լրագիրը :

«... ավետարանականի (Սինգելի) մասին նա (Ռեկֆելլերը) խոսեց ամբողջ ժամ ու կես : Նա լցված էր Սինգելով :

— Բիլլին մե՛ծ բարիք գործեց Նյուր-Յորքի համար... ասաց նա : Նա պատմեց 187 միլիոնգների մասին 100 զանազան գործարաններում, 50 հազարից ավելի մարդկանց ներկայութիւնում :

— Իս հրաշալի՛ գործ է... Ծախսված է 200 հազար դոլլար, չը հաջված աշխատանքը : Այնուամենայնիվ մենք դիվիդենտ (ոգուտ) ենք սպասում, թեև յեկող տարի միայն :

Ա՛յ, սա արդեն անկեղծ խոստովանութիւն է :



կրօնը արդյունավետ դործ ե, ուր Ռոկֆելլերները զընում են իրենց կապիտալներն ու սպասում արդյունքներին: Վո՞րտեղից պիտի լինի այստեղ արդյունք: Ահա թե վորտեղից. բանվորները կը աղոթվեն քրիստոնեական—ալեոտարանական վողով, չեն կաղմակերպի գործադուլներ, այլ բոլոր սեփով կաշախտեն և տիրոջ համար հարստութուն կըլիցեն:

Ի դուր չե, վոր նրանք ամեն հնարավոր միջոցներով աշխատում են ստիպել բանվորին հավատալ աստծուն ու յեկեղեցի գնալ: Ահա, որինալ, թե ինչպես մեր գործարանատերերը մինչպատերազմյան ժամանակներում ստիպում էյին բանվորին հավատալ աստծու: Մեր աւաջն ե «Յա. Լարզինի և Վ. Գրյադնովի առեարական տանը» պատկանող տեքստիլ գործարանի մի բանվորի հաշվեգրքույիլ: Այդտեղ ներքին կարգ ու կանոնին վերաբերյալ կանոնադրության մեջ կարգում ենք.

«Թ) Յերկու սեռի ու ամեն հասակի բանվորներն ու արհեստավորները պարտավոր են կիրակի ու տոն օրերին հաճախել յեկեղեցի: Այս հողվածը չկատարող հանցավորները յենթարկվում են դրամական տուգանքի, վճարելով 10 կոպեկ, հողուտ գործարանի աղքատները ու հիվանդները, իսկ 5 կոպ. արծաթով հողուտ հանցանքն սպառնուցողին»:

Ահա թե ինչպես ձեռնաու յե քրիստոնեությունը կապիտալիստներին:

### ՅԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՇՏ ՈՒՆԵԼ Ե ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

Քրիստոնեությունն իր պատմության ամբողջ ընթացքում միշտ պաշտպանել և հարուստներին աղքատ-

ների դեմ, չահագործողներին՝ չահագործվողների դեմ: Քրիստոնեական յեկեղեցին միշտ շատ խաղաղ ու բարեկամարար ե այրել հարուստ—չահագործողների հետ, հատկապես այն հարուստների, վորոնք «վո՞չ մի կերպ չեն կարող մտնել յերկնքի արքայությունն» իրենց հարստության պատճառով: Քրիստոնեական յեկեղեցին իր բոլոր ուժերով աջակցել ե միշտ կապիտալիստներին իրենց գրպանները լցնելու բարեհոգի գործի մեջ ի հաշիվ «սովյախների ու ծարավիներին»: Բավական ե հիշել քրիստոնեական միսիոներ—քարոզիչները ստոր աշխատանքն Արևելքի՝ յերկրներում, այդ յետամնաց վայրերում, վոր ընակված են կիսավայրենի ու վայրենի քարվանդով: Այդտեղ միսիոներներն զբաղվել են ու ներկայումս ել զբաղվում են հող նախապատրաստելով ավելի հաջող թայանելու և չահագործելու համար դժբախտ յետամնաց ժողովուրդներին:

Հիշենք յեկեղեցու դավաճան դերը անգլիական հանրախորների վերաբերմամբ 1926 թվի նրանց հերոսական գործադուլի ժամանակ: Հանրախորներն ինչպես հայտնի յե, դուրս յեկան աշխատանքի որվա յերկարացման ու աշխատավարձի կրճատման դեմ:

Ի՞նչպես վերաբերվեց յեկեղեցին այս խնդրին: Գործադուլի հենց սկզբից անգլիական յեկեղեցու պուլիտիկոսները արքեպիսկոպոսը չեք դադարում գրեթե ամեն սր դիմելու հանրատերերին, առաջարկելով ու համոզելով թողնել գործադուլն ու համաձայնել տերերի առաջարկած պայմաններին, այսինքն մուրացիկ ու տաժանակիր աշխատանքի պայմաններին: Չանաղան տեսակի դավաճանների ջանքերով հանրախորերը կոտորվեցին: Յեւ, իհարկե, տերերը չմոռացան յեկեղեցական-



ների մատուցած ծառայութիւնը: Յերբ 1928 թվին  
Կենտրոնների արքեպիսկոպոսն Հրաժարական տվեց,  
նրան վաս չը վարձատրեցին: Կառավարութեան գլուխը,  
Հայոնի ածխահանքատեր Բարդուղիմէոս ընծայեց նրան  
145 հազար ուսույթ, իսկ թագավորը նշանակեց տարե-  
կան 15 հազար ուսույթ կենսաթոշակ:

Ահա և մի ուրից քրիստոնեական «Կոմմունիստ»  
—Վյուրտենբերգից, գերմանացի մի տերտեր, վոր քա-  
րոզի մեջ Հայտարարում էր՝

«Ամեն մարդ գիտե, վոր գողութիւնը պատժի ար-  
ժանի պործողութիւնն է: Մեր սրերում գողութիւնն է,  
յերբ բանվորներն հաճախ պահանջում են աշխատա-  
վարձի հալելումն»:

Այսպիսով, տերտերներն համարում են, թե՛ իրենց  
բռնութիւնը բարեխաղաղ համար բանվոր դասակարգի  
մղած պայքարը հանդիսանում է գողութիւն, իսկ բան-  
վորների թալանումը շահագործողների ձեռքով — դա  
արարարացի սուրբ գործ է:

### ՅԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՆՎԱԾԱՏԵՐ Ե ՅԵՎ Վ.ԱՇԽԱՌՈՒ

Յեվ ի՛նչպես կարող է յեկեղեցին դուրս գալ հա-  
րուստների ու հարստութեան դեմ, յերբ հենց ինքը անբ  
եր հանդիսանում ու հանդիսանում է անհաշիվ գանձերի,  
միլիոնավոր հեկտարներով հողերի. հոյակապ պալատ-  
ների ու այլ արքավորումների... Որինակ՝ մինչ հե-  
ղափոխութիւնն յեկեղեցին Ռուսաստանում ստանում էր  
տարեկան 400 միլիոնից վաչ պակաս յեկամուտ:

Ողբարիտ յեկեղեցին 1915 թվին ուներ 2846681

հեկտար հող՝ վորից Սոլովեցկի վանքը 71.940 հեկտ.  
Գրիգորեակ—Բերբկովսկին—28300 հեկտ., Սարովի ա-  
նապատը—28601 հեկտ., Կոմեոգորսկին—27071 հեկտ.:

Մոսկովայի միտրոպոլիտան ստանում էր 81 հազար  
ուսույթ, իսկ Նովոգորոզի արքեպիսկոպոսի տարեկան  
յեկամուտը կազմում էր 307500 ուսույթ:

Յեկեղեցու համար դեռ քիչ էլին այն յեկամուտնե-  
րը, վոր ստանում էր նա մասսաներին խարելու համար:  
Վանքերը լայն կերպով պարապում էլին և վաշխատու-  
թյամբ: Ոգտվելով գյուղական աղքատութիւնից, վան-  
քերը կարեքավոր գյուղացիներին տալիս էլին վորոշ  
գումարներ մեծ տոկոսներով: Յերբ պարտապանն ան-  
կարող էր լինում ժամկետին վճարելու այդ գումարը,  
նրա կարողութիւնն անցնում էր վանքին, իսկ յերբեմն  
և ինքը գյուղացին ընկնում էր նրա ճորտատիրական  
իրավունքի տակ:

Այս բոլորից յեզրակացութիւնը շատ պարզ է: Բը-  
րիստոնեական յեկեղեցին միշտ և ամեն տեղ արդարա-  
ցրել և արդարացնում է շահագործումը, կայիտալիզ-  
մը, ճորտատիրութիւնը: Նա աստծու անունով սրբա-  
գործում է շահագործողների կատարած բոլոր խայտա-  
ռակութիւնները:

Քրիստոնեութեան հակահեղափոխական, շահագոր-  
ծական դերը ավելի քան լավ յերևում է «Սրբազան  
սինոդի» հրահանգի խոսքերից, վոր տվել է նա ուղղա-  
փառ հոգեվորականութեանն 1905 թվին:

«Տերը մեկին հարստացնում է, մյուսին աղքատաց-  
նում: Այդ պատճառով ել ամեն վոք, վոր կհանդգնի  
խոսք բանալ ուրիշի բարիքը խլելու մասին, նա հակա-  
ռակ կը դնա աստծուն, բոլոր բարիքների գերազույն



լաշխողին, կուզենա կանգնել աստծուց բարձր, լինել նրանից լավաստուն, իր ստեղծողից՝ կընկնի ծանր մեղքի մեջ»:

**ԻՆՉՊԵՕՍ Ե ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԻՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԻՇԵՍՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՂՔՍՏՆԵՐԻ ԻՇԵՍՆՈՒԹՅԱՆԸ**

Պաշտպանելով հարստութունը, քրիստոնեությունը միշտ նեցուկ է հանդիսացել շահադործողների իշխանությունը: Տեսնենք ի՞նչ է ասված այս խնդրի առթիվ այն դրքերում, վոր ամփոփում են քրիստոնեական ուսմունքն, խի հետո պարզենք, թե ինչպես է իրադործել և ինչպես է իրադործում այդ ուսմունքը քրիստոնեական յեկեղեցին:

«Ամեն անձն թող հնազանդ լինի բարձր իշխանությունն, ըստ վորում չկա իշխանություն, վոր աստծուց չլինի»<sup>\*)</sup>: Ուրեմն յեթե «ամեն իշխանություն աստրծուց է», հետեվպես նշանակում է և աշխատավորների իշխանությունն էլ աստծուց է: Սակայն վո՛չ, բնավ այդպես չէ: Տեղեր կա նույն դրքի մեջ, վոր շատ պարզ պատասխանում են այդ հարցին: «Թաղավորին հարզեցեք... հնազանդ յեղեք թաղավորին»<sup>\*\*)</sup>: «Ինքն աստվածն և կարգում թաղավորներին»<sup>\*\*\*)</sup>: Թաղավորական իշխանությունն էլ աստծուց է, խի մնացածները, յերևի սատանայից: Այս պատճառով էլ պետք է պաշտպանել մխիթայն քաղաքական իշխանությունը և համառ

\*) Թուղթ առ Հովմայեցիս Գլ. XII, 1.

\*\*\*) Առաջին թուղթ Պետրոսի II, XIII.

\*\*\*\*) Գրքը Դանիելի II. 21.

կերպով կոխվ մղել բոլոր նրանց դեմ, ովքեր դեմ կը լինեն նրան: Յեկեղեցին իր այս խնդիրը կատարել է միշտ առանձին ջանքով ու յեռանդով:

Խորհրդային իշխանություն դեմ յեկեղեցական կազմակերպությունները տանում են ամենաչարամիտ ու քայքայիչ աշխատանք: Վերցնենք որինակի համար մի քանի վաստեր, մեր ձեռքի տակ յեղած շատ շատերից:

Ներքին Խարազան դյուղում (Չուվաշական հանրապետություն) ապրում էր կուլյակ Գրիգորիյ Անտոնովը: Ցարական իշխանության ժամանակ նա գյուղական տանուտեր էր: Խորհրդային իշխանությունը նա հենց միանգամից ատեց: Նա չարունակ ասում էր, վոր այդ իշխանությունն աստծուց չէ: Անտոնովը կազմակերպեց ավետարանականների աղանդ ու թաղնվելով «սուրբ» դրքի խոսքերի տակ, հակահեղափոխական քարոզներ է տանում:

Անտոնովի վորդին, Փիլիպ Գրիգորեվիչը գնաց հոգ չավզով: Կատաղած, վոր իր հորն աքտորեցին Սալովիկի, նա սկսեց ավելի լպիլջ կերպով դուրս գալ խորհրդային իշխանություն դեմ: Նա աշխատում էր ապացուցել, վոր գյուղացիների ու բանվորների ճանապարհները տարբեր են, նա հրաժարվում էր ընդունել խորհրդային մարմիններից վորեւէ վաստաթուղթ ու կարգադրություն: Յեվ ահա անցյալ տարվա հունվարին, յերբ հանձնեցին նրան ընտրական թերթը, նա յեկավ փողովի ու հայտարարեց, վոր խորհրդային իշխանությունը նա չի ճանաչել և չի՛ ել կամենում ճանաչել: Սրանից հետո դեմոնստրատիվ կերպով կոոր-կոոր պատաստեց նա ընտրական թերթն ու թափելով հատակին, կոխկրտեց վոտներով, հենց նախազահություն սեղանի մոտ:



1929 թվի հոկտեմբերի սկզբներին Մատրատում բացվեց յեկեղեցականների մի հակահեղափոխական կազմակերպութուն տեղական յեպիսկոպոսի գլխավորութեամբ:

Հոկտեմբերի կեսերին հենց նամա կազմակերպութուն հայտնաբերվեց Վյատկայում, Վյատկայի յեպիսկոպոս Վիկտորի գլխավորութեամբ: Կազմակերպութեան մեջ էլին՝ տերտերներ, առևտրականներ, կուլակներ, վոր սլաքար էլին մղում խորհրդային իշխանութեան դեմ ու ամեն կերպ աշխատում քանդել սոցիալիստական շինարարութեանը: Նրանց կազմակերպութեան կենտրոնը Վյատկայի վոսկրեսենսկի մայր տաճարն էր:

Հոկտեմբերի վերջին Հյուսիսային Կովկասում բացվեց մոնարխիստական, մարտական մի կազմակերպութուն՝ վոր գոյութուն աներ կրոնական «Լիմյապոլցի» ազանդի անվան տակ:

Այդ ազանդավորների կազմի մեջ մտնում էլին՝ գեներալ Ռայգոյի, կնյայ Սան-Քեմիրովի, գեներալ Սվոտսիկովի սպիտակ-բանակային ջոկատների նախկին մասնակիցները... վորոնք առանձնապես աչքի էլին ընկել իրենց զազանային վերաբերմունքով դեպի աշխատավորները, քաղաքացիական կռիվների շրջանում: Ազանդի գլուխ էլին անդեյ՝ Կիևի նահանգի նախկին կալվածատերներ և ցարական սպաներ Գրիգորեիչ յեղբայրները: Դրանց մերձավոր ոգնականներն էլին՝ սպիտակ բանակային պատվիչ ջոկատի անդամ Գոլովանը, սպիտակ բանակայիներ Չերնիշևին, Տեկիև և ուրիշները:

«Լիմյապոլցիները» ազանդը սովետայն յեռանդով պատրաստվում էր զինված ապստամբութեան Սորհրդ-

դային իշխանութեան դեմ, դնելով ու պատրաստելով հրաձիգ գեներեր ու զինվորական պաշարներ: Յեյ միայն այդ շրջանի գյուղացիների աշայրջութեան շնորհիվ Պետրազվարչութեանն հաջողվեց վորսալ այդ բանդաներին, վոր թագնված կրոնական ազանդի տակ, պահանջում յին մինչ այդ իրենց գոյութունը:

Հոկտեմբերի վերջին Մոսկովայի շրջանի Սերպուխովում բացվեց մի տերտերական հակահեղափոխական կազմակերպութուն, վորի գլուխն անցած էլին տեղական տասներկու տերտերներ: Կազմակերպութեանն իրեն նպատակ էր դրել Սորհրդային իշխանութեան ձեռնարկումների խանգարումը: Նրա հակահեղափոխական վերջին յելուցին էր անդնդհատ շարաթվա դեմ մղած ազխտացիան:

Պակաս հակահեղափոխական շեր և «Ֆյոգորովցիկ խաչակիրների» ազանդավորական կազմակերպութունը վոր վերջին ժամանակներս բացվեց Վորոնեժի գատավարութեան կողմից:

Մամուլն այսպես և բնորոշում այդ հակահեղափոխութեան գլխավոր մոմենտը, վոր բացեց գատարանը՝ «Դատվողները մեղադրվում են այն բանում, վոր զեկավար հանդիսանալով հակահեղափոխական կազմակերպութեան, յայն կերպով ոգտագործել են կրոնական նախապաշարումները Սորհրդային իշխանութեան դեմ ազխտացիա մղելու համար—Տոգուս միապետական կազմի, կազմակերպել են տերտերիստական ակտեր, ազխտացիա յեն մղել դարոցի և կոսպերացիայի դեմ, խանգարել են հացամթերումը»:

«Իբրևկ իրային ապացույց գատարանում դրած էր կազմակերպութեան յետույնի գրոշն այսպիսի մակաշրութեամբ՝ «Տե՛ր, պահյա զկայսրն մեր»:



«... Բեկ գյուղում Ֆյոտորովցիները ցրել են դըպրոցը: Հենց այստեղ էլ գիշերները նրանք վարժեցնում էին յերիտասարդությանը ռազմական զինավարժությամբ ու քարոզում արակտորակայան կազմակերպելու դեմ: Յերբ կազմակերպվեցին առաջին ցանձաային ընկերայություններն այստեղ, Ֆյոտորովցիները ցույց կազմակերպեցին դրա դեմ, յերգելով ցարական հիմնը: Հըր գեհում էին կոմմունիստների ու չքավոր ակտիվիստների աները: Այսպիսով մի անգամ ՅՅ տուն այրեցին»:

«Ֆյոտորովցիներն իրենց ժողովներին յերգում էին ցարական հիմնը՝ «Տեր, պահյա վկայսրն» և «Մեր մեակ հույսը ու բոլոր ուժը կնյազ Միխայելն է»: Ֆյոտորովցիները մեծ հույսով սպասում էին «սելիտակ ձիավորներին» կնյազ Միխայելի գլխավորությամբ, վոր պիտի մորթոտեն բոլոր վո՛չ Ֆյոտորովցիներին»:

«Մեղադրյալ Ատորկենն հայտարարում է՝  
— «Նիկայային մենք ընդունում ենք: Թեև սպանեցին նրան, սակայն նրա հողին յերկինք համբարձալ ու այնտեղից կգա իր բոլոր փառքով: Իսկ Լենինին մենք չենք ընդունում—նա սև է»:

«Ֆյոտորովչինայի զարգացման հետ գուգընթաց, ավելացավ հրաձգությունների թիվը, ընդ վորում այրվում էին բացառապես խորհրդային ակտիվիստների աները, վորոնք դուրս էին գալիս այդ աղանդից, կամ չէին ուզում մտնել նրա մեջ: Միայն 1928 թվին Ն. Կալետովում տեղի ունեցան 30 հրաձգություններ, վորոնք սկսվում էին բացառապես տոներին, յերբ աղանդի գլխավորներն աղոթում էին յեկեղեցում և սպասում «անտեսանլի հրաչքի»:

Անցյալումն էլ յեկեղեցին գործել է ճիշտ աղպես: Իրիստոնեական յեկեղեցու վողջ կյանքը, նրա ամ-

բողջ պատմությունը ներկայացնում է իրենից տիրող գառակարգի ու նրա իշխանության սպասարկման պատմություն:

### ՌԻՂՂԱՓՍՈ ՅԵԿԵՂԵՑԻՆ ՅԵՎ ԻՆՔՆԱԿԱ- ԼՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանում ցարիզմն ընթացել էր իր արյունոտ ուղիով շարունակ ձեռք-ձեռքի տված ուղղափառ յեկեղեցու հետ միասին: Չի յեղել մի նողկալի վոճիր, չի յեղել այնպիսի գարչանք, վոր չարբազործեր ուղղափառ յեկեղեցին:

Ճորտատիրական ամենալատ, ամենամոռայլ ժամանակներին հոգևորականությունն ամեն ինչ արել է, վոր պեսդի թույլ չտա գյուղացիությանը բարձրանալու իր հարստահարիչների դեմ: Իսկ յերբ հուսահատության ծայր աստիճանի հասած գյուղացիությունը սպասամբել է, տերաերներն իրենց բոլոր ուժերով ոգնել են բռնակալական իշխանությանն ու կալավածատերերին հեղափոխական շարժման առաջն առնելու, արյունի մեջ յսեղդելով նրան:

Առանց այն էլ ընկճված գյուղացիներին վախեցնելու համար տերաերները նգովքի էին մասնում (անիճում) նրանց, ովքեր կովի կոչ էին անում զրկվածներին ու հարստահարվածներին:

Ժողովրդական հայտնի հերոսներ՝ Ատեփան Ռազինն ու Յեմեյցան Պուգաչովն ամեն սարի յենթարկվում յին հրապարակական նղովքի: Յեվ միաժամանակ բարձրագոչ մաղթանք էին կարգում «ամենաբարեօպաչտ, ինքնակալ» թագավորի համար:



Ինչո՞ւ համար եր կատարվում է ումն եր պետք  
այս խեղդատակութունը:

Նրա համար, վորպեսզի գոնե գրանով պաշտպանեն  
կալվածատիրական սեփականութունն ու արքայական  
զահը:

Նյովք հեղափոխականներին և որհնենք դահիճնե-  
րին—այդպես և աշխատել միշտ յեկեղեցին: Հենց միայն  
1905 թվի հեղափոխութունն էլ մեզ տայիս և ահազին  
նյութ, դատելու համար, թե ո՞ւմ հետ և յեղել յեկե-  
ղեցին:

Բանփորները և գյուղացիները բոլոր հարձակում-  
ներն, սկսած հունվարի 9-ից ու վերջացրած Մոսկվայի  
դեկտեմբերյան ապստամբությամբ և գյուղացիների  
ապստամբությամբ, միշտ հանդիպել են կատարի հակա-  
հարվածի ֆարաճափորների սև բանակի կողմից:

Մեծարարությունները, արքեպիսկոպոսները, հասա-  
բակ տերտերները, վարդապետները—պարագիտները  
այս վողջ վոհմակը ճիշդ և թափել միշտ պաշտպանելու  
ցարին, կալվածատերին ու իրենց յեկամուսները: Ամ-  
պի պես բարդ-բարդ ամեն տեսակի թոռցիկներ զոչեր,  
բրոջուրներ ու լրագիրներ են հրատարակել ու տարա-  
ծել այդ «խողաղ» թալանչիները: Նրանց մողթանքե-  
րը, թափորներն ու բարոցները լեվ-լեցուն են յեղել  
միշտ բռնակալական, հակահեղափոխական ու ավաղա-  
կային ազիտացիայով:

Այդ բանում աչքի ելին ընկնում ատանձնապես վան-  
քերը (Տրոյեկ-Սերգեյևսկայա տաճարը, Պոչայևսկայա  
տաճարը և մյուսները): Պոչայևսկայա կալվան ահա-  
զին քանակությամբ թոռցիկներ և բաց թողել, վորոնց  
մեջ կոչ և անում ամենքին ախնա կերպով հախիցը  
զայ հեղափոխականները և առանձնապես հրեաների:

Պոչայևսկի տաճարի վարդապետներն ամենաակտիվ  
անդամներն էլին «Ռուս ժողովրդի Միության», վոր էջ-  
խանության աշակցությամբ լախնածավալ հրեական  
պողոթմներ ևր կազմակերպում ամեն տեղ:

Ինչո՞ւ համար էլին այդ բոլորը: Նրա համար, վոր  
մասսաների ուչքը զբաղեն հեղափոխութունից ու  
պաշտպանեն ցարի ու նրա մտերիմների իշխանությու-  
նը: Յերբ 1905 թվի հոկտեմբերյան ընդհանուր գործա-  
դուլի ժամանակ քանդվում էր ցարիզմի հիմնահողը,  
յերբ թվում էր, թե՛ հասել է հեղափոխության հաղ-  
թանակի ժամը, Մոսկվայի մխարոսոլիտն իր թեմի բո-  
լոր յեկեղեցիներին ուղարկեց մի «խրատական» հրա-  
հանդ, վորը տերտերները պիտի կարդային սեղանից  
ժողովրդին: Դրա մեջ է միճի այլոց ասված ևր հետե-  
յալը.

«Անարգում են զո թագավորիդ, պատառոտում  
նրա պատկերը, պարսավում նրա արքայական հը-  
րամանները, ծաղր ու ծանակի յեն յենթարկում նը-  
րան. միթե՞ կարող է համբերել սիրող այս ամեն-  
քըն, ու՞մ մարդ... Ի՞նչ պիտի անես դու. Անսահ-  
մանարեն անձնվիր ծառան յեղիր քո քաղաքիդ,  
կոտարիք այն ամենն, ինչ կպահանջեն քո արքա-  
յիդ ծառաները, ինչ կասի քեզ զո հովիվդ ու յեկե-  
ղեցին: Պատրաստ յեղիր միշտ մեռնելու զո թաղա-  
փորիդ և Ռուսիայի համար Յերկնային տերոջ աստ-  
վածային պատգամն է. թագավորին պատվեցեք,  
ինքը Քրիստոս—մեր վրկիչը ցույց ավեց մեզ այդ  
սրտատուչ որինակը»:

Ի՞նչ յեղով արդյունքն այդ «խրատականները»: Գրա-  
նվիցին մութ մարդիկ գյուղացիների մեջ և նույնիսկ  
բանփորների հետամնաց խավերում, վորոնք յենթարկ-  
վելով տերտերների այդ պազրոմային կոչերին, զնացին  
նմանվելու Քրիստոսի «սրտատուչ որինակին»: Նրանք



խմբվեցին սև հարյուրյակային գուռազները մեջ և «ոուս ժողովրդի միութեան» առաջնորդների ղեկավարութեամբ (կուլակների, առևտրականների և ծրագրայալ փոստիկանների) գնացին Չախջախելու բանվորական ցույցերն ու հրեական չքավորութիւնը:

### ՀԱՐԱՄԱՐՎԵԼԻ ՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ

Յերբ 1917 թվի փետրվարին խորտակվեց միապետութիւնը, ուղղափառ յեկեղեցին արագ կերպով, իսկույն հարմարվեց նոր կարգերին: Նա տեսավ, վոր չքանայելով թաղամորի տապալմանը, կապիտալիստական կարգերը դեռ մնում են, ուստի ուրախութեամբ ընդունեց նոր իշխանութիւնն ու միութեան մեջ մտալ նրա հետ: Կերեհակու կառավարութիւնը—կարվածաաների գործարանատերերի ու վաճառականների կառավարութիւնը շատ լավ հասկացալ, թե ի՞նչ աջակցութիւն կարող ցույց տալ իրեն յեկեղեցին հեղափոխութեան դեմ կռվելու համար:

Նա գործում էր սերտ միացած յեկեղեցու հետ. նա վերականգնեց այսպես կոչված «պարիարքական ախոռը», վոր դեռ Պետրոս I էր վերացրել ու պատրիարք նստադրեց՝ Տիխոնին՝ աշխատավորների յերդվյալ թընամուն, այն Տիխոնին, վոր Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո այնքան աշխատեց հակահեղափոխական ուժերը կազմակերպելու համար:

Չր նայելով սպիտակ բանակայինների ու յեկեղեցու բոլոր ջանքերին, խորհրդային իշխանութիւնը քաղաքացիական կռիվներում հայթոյ հանդիսացալ: Յերբ յեկեղեցականները տեսան, վոր բանվոր դասակարգի իշխանութիւնն անսասան է, վճռեցին հարմարվել նրան

և աշխատավորների բարեկամի դիմակն առան դեմքերին:

Յեկեղեցին շա՛տ արագ և գունափոխվում: «Անհարմար» Տիխոնը, վոր արդեն թունդ թալանչու (պոպոմ-չչիկի) ու հակահեղափոխականի հուշակ էր վայելում, հեռացվում և ասպարիզից: Յերևան են գալիս նոր դեմքեր, Վեսենակներ, Կոստանիցիկներ, և ուրիշներ: Հնչում են այժմ ուրիշ ճառեր:

1923 թվի յեկեղեցական համագումարը «... հայտարարում է կապիտալիզմը մահացու մեղք»: Համագումարը խարանում է միջազգային ու հայրենի հակահեղափոխութիւնը: Առաջ յեկեղեցականները նդովում էլին հեղափոխականներին ու փառաբանում թաղավորներին, այժմ փոխում են իրենց տակտիկան: Յեվտոկիմ յեպիկոպոսը գրում է՝ «Թող որհնյալ լինեն հսկումբերյան սրբերը, վոր փշրեցին ստրկական շղթաներն ու ժողովրդին իսկական ազատութիւն պարգեծեցին»:

Ինչո՞ւ յեկեղեցականներն այլպես կարող կենսով փոխեցին իրենց տակտիկան:

Յեկեղեցականներն աշխատում են հարմարվել մասսաների տրամադրութեանը: Նրանք տեսնում են, վոր աշխատավորները Սորհրդային իշխանութեան կողմն են, սոցիալիզմի կողմը և փորձում են մի կերպ հարմարվել, վորպեսզի չմնան առանց ազդեցութեան ու առանց յեկամուտի:

Այդ բոլորն այդպես է, թերևս ատեն մեզ: Յեկեղեցին հիրափի հետագեմ է: Բյաց ահա ադանդավորները, այլետարանականները, որինակ, բարտիստները, ազվենտիստներ, դրանք ի՞նչ իսկական սոցիալիստներ են, միայն քրիստոնեյական, իհարկէ: Նրանք, իբր



բուրժուազիայի ու կաթսամատերերի իշխանությունն չբերեք չեն նպաստել ու այժմ էլ չեն նպաստում: Նրանք, իբր, ամբողջ սրտով ու բոլոր ուժով ուղեում են Խորհրդային իշխանության... Այդպիսի պնդումների կեցածությունը շատ հեշտ է հասկանալ. բախական է միայն փաստերին նայել:

Մինչ հեղափոխությունն էլ ազանդափորները ուղղափառ անբուրժուական փաստներին ծառայում բռնակալությանը:

Առաջին հեղափոխության փոթորկալի սրերում (1905) Ռուսաստանի բոլոր ծայրերից ամեն տեսակի ազանդափորական համագումարներն ու ժողովները ամենահավատարիմ հարատակության հեղադրեր էլին անկում թագափորին, փորձեց մեջ իրենց պատրաստականություն էլին հարձակում՝ մինչև վերջին բուրժուազիայաները ցարական իշխանությանը: Իրենց սարկական ստորաբարձությամբ թագապիր տխմարի առաջ, ազանդափորներն համարձակ կարող էլին մրցել ուղղափառ յեկեղեցու ներկայացուցիչներին հետ: Հոկտեմբերյան հեղափոխությանն ազանդափորները գլխավորեցին իբրև «սոսանայական փորձություն»: Հոկտեմբերյան հեղափոխության սրերին բարձրամտների «ճշմարտության խոսք» լրագիրը գրում է հետևյալը՝

«Մանր է հոգիս... Բայց չեմ կրկնելի կուսակցությունն ամբողջ իշխանությունը իրեց մյուս կուսակցությունների ձեռքից... Հանձարեղ մտքի բոլոր սրությունները թափվեցին փոշու մեջ նորին մեծության խամի (դյաղա) առաջ...»

Պրոլետարիատն ազանդափորների համար խամերի բազմություն է...

Յեկ բաղաբացիական կոխիներին ժամանակ ազան-

ազանդափորները մեծ յեռանդով աջակցում էլին սոցիալական կոխիներին ու փնտրում Խորհրդային իշխանությանն ուր ինչով կարողանում էլին: Բաղաբացիական կոխիների ժամանակ նրանց գլխավոր «մասնագիտությունն» էր թողցնել գոտայիքներին, բանդիկաներին ու հակահեղափոխականներին: Այս հոգի վրա շատ գործեր քննվեցին Խորհրդային դատարաններում:

### ՌԻՄՆ Ե ՉԵՌՆՏՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչպիսի՞ կյանք է բարոյում բրիտանեկությունը: «Սուրբ գրոց» մեջ չառ կան այնպիսի կտորներ, վոր ստիպեցնում են «հեղություն», «սեր» և «անդիմադրություն»: «Սիրի՛ր մերձավորիդ ինչպես ինքզ թեզ»: «Բոլոր մարդիկ յեղբայրներ են»: «Կյուրեն մի այտիդ՝ դարձրու մյուսը»: Բրիտանեական վարդապետության համաձայն հեղությունը դերազույն առաքինություն է: Մինչև իսկ Սինոդի 1905-6 թվի ջարդարարական արշուներու կոչերի տակ ստորագրում էլին՝ «խոնարհ վրաբիբ» «խոնարհ նախանայել» և այլն: Տիտոնն իր հակահեղափոխական թուուցիկների տակ նույնպես ստորագրում էր՝ «խոնարհ Տիտոն»:

«Սիրել մերձավորին»—առիմ է ափեազանում: Իսկ ո՞վ է այդ մերձավորը: Ես հազործողը նո՞ւյնպես մերձավոր է: Այո՛, իհարկե: Հենց նա յե «ձեր մերձավորը, ձեր յեղբայրը, փորին պեսք է սիրել»: «Իսկ հարուստը ձեր յեղբայրն է, այդ պատճառով էլ դուք նրան կս պիտի սիրեք: Իսկ պատերազմի հարուստների հետ եզ՝ չի կարելի»<sup>\*)</sup>: Խոնարհվի՛ր, ճնշվա՛ծ—

\*) Թուրք առ Յերբայեցիան գլ. XII, 14



ասում ե յեկեղեցին: Չմտածես վոչնչացնել շահգործող-  
ների իշխանութունը: Չհամարձակվես մտքովդ ան-  
գամ անցկացնել այնպիսի հեղաշրջման մասին, վոր կա-  
րող ե փոխել հասարակական կարգերը: Չե՞ վոր աս-  
ված ե «գրոց» մեջ՝ «ամեն մարդ ինչ կոչումի մեջ վոր  
կանչված ե, նրա մեջ ել թող մնա»\*)...

Ծնվել ես պրոլետարական լուսանիքում, ինքդ պրո-  
լետար ես—քաշիր մինչե՞վ կյանքիդ վերջը վարձ ու  
աշխատանքի ծանր բեռն ու բավական յեղիր քո այդ  
«կոչումից»: Ի՞նչ այդ ել քիչ ե՞ ստորացրու քեզ, վո-  
րովհետև՝ «ով բարձրացնի իր անձը՝ նա կխոնարհվի,  
իսկ ով խոնարհի իր անձը՝ նա կբարձրանա»: Ստորաց-  
րու քեզ այս աշխարհում. յերբ թքեն յերեսիդ՝ սրբիր,  
յերբ հարվածեն՝ դարձրու մյուս յերսդ, դրա փոխա-  
րեն պարզե կատանա մյուս աշխարհում:

«Ծառանե՛ր, ամեն բանի մեջ հնազանդ յեղեք ձեր  
մարմնավոր տերերին, վո՛չ թե յերեսանց միայն, հա-  
ճոյանալու համար, այլ սրտի միտմտությամբ, ասածուց  
փախենալով»\*\*): Յեթե դո՛ւք ստրուկնե՛ր, հարստա-  
հարվածներ, ճնշվածներ չհպատակվեք ու չնազանդվեք  
արյունարբու տերերիդ, աստված ձեզ կարտժի:

«Հնազանդվեցեք տերերին, վոչ միայն բարիներին,  
այլ ե խոտափրաներին»\*\*\*): «Ծառանե՛ր, հնազանդ  
յեղեք ձեր մարմնավոր տերերին յերկյուզով ու դո-  
ղալով»\*\*\*\*):

Ահա թե ի՞նչ ե քարոզում քրիստոնեական բարոյա-  
խոսութունը:

\*) Թուղթ առ Կորնթացիան գլ. VII. 20

\*\*) Թուղթ առ Կորնթացիան Գլ. III, 23.

\*\*\*) Թուղթ Կաթողիկոսայց Գեորգի առաջին գլ. II, 18

\*\*\*\*) Թուղթ Չորոսի առ Յեփեսացիան գլ. IV. 5

Քրիստոնեական վարդապետությունն ամենքին չի,  
վոր համաստացնում ե այդ տակտիկան: Եահագործողնե-  
րին, սարկատերերին՝ քրիստոնեութունը խորհուրդ ե  
սալիս գործելու բոլորովին այլ կերպ: «Անսխտան ծա-  
ռային հանեցեք դրսի խալաբբ ե այնտեղ կլինի լաց ու  
ատամների կրճտոց»\*\*): Միանդամայն պարզ ու փո-  
րոջ խորհուրդ. բանվորներն այնքան ել հնազանդ չեն.  
ինչպես այդ ցանկալի յեր քեզ «Ոննարհ ու սիրեցյալը  
յեղբայր» կապիտալիստ: Լուկուսա հայտարարիր,  
դուքս չարտիր նրանց գործից, այդ անսխտան ծառա-  
ներին, թող լան ու ատամները կրճտացնեն, թող քաղ-  
ցից սատկեն—ինքն աստվածն ե այդպես հրամայում:  
Ստրուկը հենց նա յե, վորբ իմացել ե իր տիրոջ կամքը  
ե չի յեղել պատրաստ, չի արել տիրոջ ուզածին պես,  
ե չատ ծեծ կուտե»\*\*\*):

Յե՞վ կապիտալիստները քրիստոնեական այս տակ-  
տիկային շա՛տ սրտանց են հետևում:

## «ՍԵՐՆ ԱՌ ՄԵՐՁԱՎՈՐԸ» ԾԱՀԱԳՈՐԾՈՂ- ՆԵՐԻ ՄՈՏ.

Ձորս հարյուր տարի ստաջ, գերմանական  
դյուղացիութունը, չղիմանալով կյանքի դժոխային  
պայքաններին, ապստամբից իր տերերի դեմ: Գյուղա-  
ցիները շատ բան չեյին պահանջում: Ամենազլխափոր  
պահանջն այն եր, վոր վերացնեն ճորտատիրական իրա-  
վունքը: Պարզամտորեն դյուղացիներն իրենց պահանջը  
բավարարելու անհրաժեշտությունն արացուցելու հա-  
մար հիմնվում եյին «սուրբ գրքի» վրա:

\*) Ավետարան ըստ Մաթեոսի XXV. 80.

\*\*) Ավետարան ըստ Լուկասու XII 47:



Այլ ժամանակներում սուրբում էր հոգեկամոր քա-  
րոզիչ, լյութերական դավանութեան հիմնադիր Մարտին  
Լութերը:

Մինչ հեղափոխութեանը Լյութերը խոյ էր անում  
գյուղացիների հետ ու ձևանում գրեթե հեղափոխական,  
բայց հենց մոր սկզբից աստատմութեանը, Լյութերն  
իսկույն անցավ կնյադները կողմն ու իր թուղթիկների  
մեջ կոչ էր նում նրանց չ քաշվել աստատմանը, այլ  
վաճառեցին նրանց անինա: «Անկարելի չե խաղաղա-  
րին այլ կերպ համարել, յեթե վաչ բուռնցքով խփելով  
քթին մինչև արյունոտվելը — այսպես էր գրում  
քրիստոնյա Լյութերը: «Եչին պետք է ծեծել, խոյ ժո-  
ղովրդին պիտի կոտորարի ուժեղ ձեռքը, աստիճան զի-  
տե այդ, և դրա համար էլ իշխողների ձեռքը տալիս է  
վաճ թե աղվեսի պոչ, այլ սուր... Մի՞ք քաշվի, — հան-  
գստադնում էր նա իշխաններին, — պատմիների խառու-  
թյունից: Նրանք կփրկեն շա՛տ հոգիներ...» Յե՛վ քրիս-  
տոնեա իշխանները իսկապես չքաշվեցին ու իսկական  
քրիստոնեական սիրով վաճառեցին հարյուր հարարից  
ավելի իրենց մերձավոր, «խորայր» գյուղացիները:

Ճիշտ նույնպես է վարվում և շատ հարուստ Ամերի-  
կայի կապիտալիստը, ամենատալանավոր բարեխոս  
Չան Ռոկֆելլերը: Ահա նրա բազմաթիվ քաղաքացի-  
թյուններից մեկը.

Ամխահասները (նրա ձեռնարկութեան) գործադու-  
արին, վորպեսզի մի փոքր ավելացնեն իրենց ստալին  
աշխատավարձը: Ի պատասխան սրան, անմիջապես նը-  
բանց բարձրովին իրենց բնասանիքներով դուրս նետեցին  
այն խրճիթներից, ուր ապրում էյին նրանք և վորտեք  
պատկանում էյին Ռոկֆելլերին: Այն ժամանակ օտխա-  
հասների միութեանը ժամանակավոր վրամներ ավելց

նրանց: Չմտն այն սասնամանիքին այդ վրաններում  
պատասխարվեցին նրանք, բայց այդպեղ հարձակվեցին  
նրանց վրա Ռոկֆելլերի գահճները:

Գործադուրվորներից մեկը, հույն Լուի Տիկատը,  
սպիտակ գրոչակը ձեռքին, դուրս յեկավ բանակցե-  
լու միլիցիայի ջոկատի և Ռոկֆելլերի վարձու պա-  
հակները հետ: Չոկատը կազմված էր Գենդեր քա-  
ղաքի բնաբովի հանցադորճներից: Բանդիտներն ա-  
տանց նշանակութեան տալու Տիկատի սպիտակ գրո-  
չակին, հրացանի կոթերով ջախջախեցին նրա դու-  
լար: Այն ամարզի սպանութեանից հետո, նրանք  
վրամների վրա շաղ տվին Ռոկֆելլերի հորերից հենց  
նույն բանվորների հանում նախքն ու կրակ տը-  
վին վրամներին: Կրակի մեջ կենդանի-կենդանի  
ալրվեցին գործադուրվորների բնասանիքներն է-  
րենց ծծկեր յերեխաներով»<sup>\*</sup>:

Ինչպի՛ խի սրտաշարժ «սեր առ մերձավորն»... Ի՞նչ  
կա վոր: Յեկեղեցին անշուշտ կնդովի իր գավալին՝ ոտոր  
մարդասպան Ռոկֆելլերին: Բնա՛վ վաչ: Այլ նույն ամե-  
նա քրիստոնյա գարշի Ռոկֆելլերն այժմ էլ բարեխո-  
տական յեկեղեցու գլխավոր սյունն է հանդիսանում:

Հետաքրքիրն այն է, վոր այդ արյունհեղութեանից  
հետո դեղքի վայրն է ուղղվորվում հայտնի քարոզիչ  
Իրլի Սինդերը, վորի մասին մենք արդեն գրել ենք: Եա  
քարոզում է այնպեղ բանվորներին համբերութեան, հե-  
ղութեան ու սիրո մասին առ մերձավորը...

Լուս-Անջելոս քաղաքում տեղի ունեցավ կարի գոր-  
ծարանների բանվորահների գործադուրը: Յերը այն-  
տեղ յեկավ ականա՛վոր ավետարանական Ամխար, բուն-

<sup>\*</sup>) Նրանց, «կրանն ամերիկական կապիտալի սպասարկու»:



վորուհիներն սկսեցին դանդաղափել նրան «աշխատանքի շանը պայմանների ու չփաղանց ցածը աշխատավարձի դեմ, վորի շնորհիվ քաղցից չմեռնելու համար, իրենց մնում ե միայն անառակութան դիմել»։ Նա պատասխանեց նրանց. «Պահեցեք Հիսուսին ձեր սրտերի մեջ և այն ժամանակ այդ բոլոր հարցերն ինքնին կհարթվեն»։

## 1914 թ. ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՏԵՏԵՐՆԵՐԸ

Ամենքին հայտնի յի, վոր 1914 թվի պատերազմը տեղի ունեցավ իմպերիալիստ- շահագործողների շահի համար։ Հանուն հարուստների գրպանի շահերի մելիոնավոր աշխատավորները ճանապարհվեցին դեպի մահվան գիրիկը։ Նրանց սովորեցնում էին չխնայել «թշնամուն», նրանց քարոզում էին առանց խղճահարության վոչնչացնել իրենց աշխատանքի յեղբայրներին մյուս յերկրներէ բանվորներին։ Ամենքի հիշողության մեջ դեռ թարմ ե, թե ի՞նչպիսի կոչմարային ծավալ ստացավ մարդկության պատմության մեջ դեռ չտեսնված այդ սպանդանոցը։

Բայց ինչպիսիներն հենց սկզբից համարձակ բողոքի ձայն բարձրացրին ու կոչ արին աշխարհի բոլոր աշխատավորներին՝ գենրերը դարձնել շահագործողների դեմ։

Ի՞նչ ի՞նչ էլին անում այդ ժամանակ «խաղաղության ու սիրո» քարոզիչ տերտերները։ Ուղղափառ տերտերները, դիմելով խարժած ոռւս բանվորներին ու գյուղացիներին, կոչ էլին անում՝ «Ռո՛ւս գինվորներ, աստված ձեզ հեռ, սլացե՛ք ռուսի դաշտ... Թո՛ղ տերը պակի մեր գենրը հազիմանակով... Բաջարի գնացե՛ք պատերազմի դաշտ...»\*)։

\*) Սինոդի դիմումից ժողովրդին։

Տերտերները գրում էին կոչեր, թուղիկներ լսրատականներ, քարոզում էին ու ամեն տեղ կանչում՝ «Իսի՛ր, մի՛ խղճա»։ Մոսկվայի «Յոանն Իվլին տերտերը» թերթում մի այսպիսի վոտանավոր տպեց՝

«Տիրոջ ուժով մենք համարձակ  
Գնում ենք դոռ պատերազմ,  
Հեղձուձիչ դազ մեզ կը շրկի  
Տերն յերկնքից իր արձակ։

Թո՛ղ շները լակեն լեզվով  
Մեր թշնամու արյունը պիղծ,  
Մենք տաճարում յերգով, փառքով  
Փառաբանենք տիրոջը մեծ»։

Արտասահմանի տերտերները նույնպես՝ Ամերիկայի Անգլիկայի, Փրանսիայի, Գերմանիայի, — բոլոր միատեսակ յեռանդով կոչ էլին անում աշխատավորներին «յեղուները թաթախել թշնամու արյան մեջ»։ Բարտիստների քարոզիչ Իտոնն իր քարոզի մեջ, վոր ուղղված ր Նյու-Յորքի բանվորներին, ասում եր՝

«Յեթե նա (գերմանացին) յերևա այտոտդերում ոռւմըը ձեռին, ապա տարեք նրան ճահիճը, կապոտեցեք իրեն ու ոռւմըն ել կապեցեք կրծքին։ Այնուհետև վառեցեք պատրույքն ու դուք հեռուն կանդնելով, նայեցե՛ք թե ինչպ՛ես նա կթոչի իր կայգերի մոտ-դժուրը։ Անդեք լսկական տղամարդ»։

Ռուս բարտիստները նույնպես յեռանդուն պատրաստակամություն են հայտնում «լեզուները թաթախելու»։ Ականավոր բարտիստ Վ. Վ. Իվանովը «Բարտիստ» ժուրնալում գրում եր՝ (1914 թվին)․

«Պատերազմի հենց առաջին ռազմական կանչին մեր յեղբայր-աղանդավորների սիրտը թունդ յելավ կոիվի»—3



ամբողջ ուսւ ժողովրդի հետ միասին: Մենք միշտ յեղեկ ենք Մեծն Ռուսաստանի հավատարիմ զավակները, մեր թագավորների ամենահավատարիմ հպատակներ ու լավ աշխատավորներ հոգուտ հասարակության և պետության»:

Իսկ բարտիստների «Г О С Т Ы» ժուրնալը պատերազմի սկզբին գրում էր՝

«Լսում ենք, տեր-արքա լսում, չենք հեռանա քեզնից: Տե՛ր, պահիր արքային»:

Առաջներում բարտիստները, յավետարանականները, Գուխարոնները, մարականներն ամեն տեղ ասում էին, թե՛ իրենք չեն կարող գենք վերցնել ձեռքերը, վո՛չ մի դեպքում չեն սպանի մարդու, դրա համար ել նրանք չեն կարող ծառայել բանակում: Սակայն, յերբ սկսվեց թալանչիական պատերազմը, նրանք բոլորն, առանց վորեւ հակաճառության, մտան ցարական բանակի շարքերն ու յեռանդուն կերպով կոչ էին անում բոլոր աշխատավորներին՝ հետևել իրենց սրինակին: Յերբ շահագործողների շահերն են շոշափում, ազանգավորների առաջնորդները թքում են «սիրո ու յեղբայրության» մասին ասված բոլոր գեղեցիկ խոսքերի վրա: Համաշխարհային սպանդանոցի սկիզբ գնողներից մեկն էր բարտիստների համաշխարհային առաջնորդ անգլիական մինիստր Լյույդ Ջորջը:

## Պ Գ Բ Ո Մ Շ Ձ Ի Կ Ն Ե ր

(Ջարդարաններ)

Բացի այս ամենը, յեկեղեցին ամեն ժամանակ յերկպատակություն և սերմանել զանազան ազդությունների աշխատավորների մեջ ու միշտ պաշտպանել այն: Որինանիների համար շատ հեռուն գնալու կարիք չի լինի:

Հրեաների դեմ գրգռելը մեր կապիտալիստների ու կալվածատերերի համար միշտ յեղեկ է իբրև առաջնակարգ միջոց հեղափոխական շարժման ուժը թուլացնելու ու արյունաքամ անելու: Ամեն ժամանակ, յերբ շահագործողների տիրապետությանը վտանգ է սպաննացել, նրանք անմիջապես դիմել են այդ փորձված միջոցին և այդ բանում տերտերներն ամենայն յեռանդով միշտ ոգնության են հասել:

1905 թվին, կառավարության և «Ռուս ժողովրդի միության» հետ միացած, տերտերները կազմակերպեցին բազմաթիվ արյունալի ու դաժան հրեական ջարդեր: Այս խնդրում տերտերները մեծ մասամբ դուրս էին գալիս իբրև քարոզիչներ ու գրգռիչներ: «Հանուն Ֆրիստոսի կոչ եմ անում ձեզ և որհնում փոչնչացնելու ժիդերին (հրեաներ) և լեհերին: Ջարդեցե՛ք նրանց, այրեցե՛ք, մորթոտեցե՛ք այդ խռովարարներին...» Այսպես արտահայտվեց Իլիոզեր արեղան 1907 թվին «Ռուս ժողովրդի միության» համագումարում: Ամվրոսիա արեղան գրում էր, թե՛ հրեաները՝ «ոճեր են, չարի ծնունդ, նրանց հայրը հրեա է և այժմ արդեն նրանք նույնիսկ հրեաներ չեն, այլ սատանաների կաճառ»: Սրապիտն արեղան գրում է, փոր «ինքն պատված և մարգարեներն ու բոլոր սրբերը հակասիմիտականներ էլին»:

Այս գրգռիչ կոչերի ազդեցության տակ հավաքվում էր կուլակների, բոսյակների, սուևարկանների ամբոխն ու մադիթանքից հետո, ամենաքրիստոնյա հովիվների յիակատար որհնությամբ, ուղևորվում է հրեաների կոտորելու: Հազարավոր գաղանարար մորթոտվածներ, հազարավոր սոսկալի կերպով խեղանդամ դարձածներ, հազարավոր վորբեր և այրիներ-ահա յեկեղեցու ջարդարար գործունեության հետևանքը:



Արյան ծովեր և... «Յերկրի խաղաղություն, ի մարդիկ հաճություն»...

Ամերիկայում յեկեղեցին պաշտպանում է դրպուստները նեգրերի դեմ, ինչպես մի ժամանակ պաշտպանում էր սարկուսթյունը: Ամերիկայում կա այսպիսի մի դպրվելի Փաշխտական կաղմակերպություն— «Կուսկուկա-կրան»: Դրա պարավունքն է նեգրական արյունալի ջարդեր կաղմակերպել, վորոնց ժամանակ կոտորվում են հարյուրավոր նեգրեր: Յեկեղեցին սերտ կապ ունի այս ընկերության հետ:

1914 թվի համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի դեմ կռվող յերկրների տերտերները իրենց ջարդոցներում գերմանացիներին պատկերացնում էին իբրև մարդկության տականք, մարդ-գաղաններ, վորոնց պետք է մինչև վերջին շունչը վոչնչացնել: Նույն բանը ջարդում էին գերմանացի տերտերները Ռուսաստանի, Ֆրանսիայի և իրենց դեմ պատերազմող մյուս յերկրների ժողովուրդների մասին և ջարդում էին դարձյալ ասածու անունից, կոչ անում գերմանական աշխատավորությանը՝ կոտորել ուսաներին, հենց միայն նրա համար, վոր նրանք ուսաներ են:

Ինչո՞ւ համար յեկեղեցին յերկարատևություն եր սերմանում ու այժմ ել սերմանում է զանազան ազդությունների աշխատավորների մեջ: Նրա համար, վոր մթազնի նրանց գիտակցությունը, թագցնի նրանցից իրենց իսկական թշնամուն, հեռացնի նրանց ուշադրությունն այն ճնշումից ու հարստահարությունից, վորին յնթակա էին նրանք կապիտալիստների ձեռքում, վորպեսզի պահպանեն կապիտալիստական կաղմը:

## ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ԿՐՈՆ ԴԵՄ Ե ԱՇԵԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Կապիտալիստական կաղմի վրկությունն ու պահպանությունը ներկայիս բոլոր կրոնների յեկեղեցականության հիմնական նպատկն է: Մարդու ձեռքով մարդու շահադրժման արդարացումը, շահադրժողների պաշտպանությունը շահադրժվող մասսաների հեղափոխական ցատումից— սրա մեջ է միշտ կայացել յեկեղեցու աշխատանքն ու գործը: Մեք վերևում տեսանք, թե ինչպես ջրիտոննական վարդապետությունն ամբողջապես արդարացնում է այն բոլոր խայտառուկությունները, վորոնք կատարվում են յերկրի վրա: Գրիտոննական ուսմունքն, ինչպես և ամեն մի կրոնական այլ ուսմունք, կարող է ծառայել իբրև հրաշալի ծրագիր սպիտակ բանակայինների ու ամեն տեսակի հակահեղափոխականների համար, իրենց կռվում աշխատավորության դեմ:

Իսպառ խղելով միայն իր կապերը ջրիտոննական ու ամեն տեսակի կրոնական հավատալիքների հետ՝ աշխատավորությունը կարող կլինի հաջող կերպով պայքարել իր դասակարգային թշնամիների դեմ ու կառուցել նոր կյանքը:

Ամեն մի աշխատավոր պարզապես պիտի գիտակցի այս և մի անգամ ընդ միշտ վերջնականապես խզի իր կապերը կրոնի հետ:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրոնը պետք է հարուստներին . . . . .	3
Քրիստոնեյական ուսմունքը հարուստների ու սղֆատների մասին . . . . .	4
Քրիստոնեյությունը պաշտպանում է շահագործողներին . . . . .	5
Յեկեղեցին ու դասակարգային կռիվը . . . . .	8
Աղանդալուրական կոմունուներ . . . . .	20
Ազանգավորներն արտասահմանում . . . . .	25
Յեկեղեցին միշտ ոգնել է շահագործողներին .	28
Յեկեղեցին կալվածատեր է և վաշխառու . . . . .	30
Ինչպես է վերաբերվում քրիստոնեյությունը հարուստների իշխանությունն ու սղֆատների իշխանությանը . . . . .	32
Ուղղափառ յեկեղեցին ու ինֆնակալությունը	37
Հարմարվելու տակտիկան . . . . .	40
Ումն է ձեռնառու քրիստոնեյական բարոյախոսությունը . . . . .	43
«Սերն առ մերձավորը» շահագործողների մոտ	45
1914 թվի պատերազմն ու տերտերները . . . . .	48
«Պագրովճիկներ» (Քալանջիկներ) . . . . .	50
Ամեն տեսակի կրոն դեմ է աշխատալուրության	52



ՀՀ Ազգային գրադարան



NL0200729



492

ԳԻՆԸ 15 ԿՊՊ. (1<sup>3</sup>/<sub>8</sub> Գ.)



323.2  
4-90

И. КРИВЕЛЕВ

КОНТРРЕВОЛЮЦИЯ ПОД ПРИКРЫТИЕМ  
ЕВАНГЕЛИЯ

Госиздат ССР Армении  
Эривань—1981